

Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքը արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճեններ և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առևտ նյութը առևտելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Ա. ԱՎԵՏՅԵՎ

-28

ՍԵՆՅԱԿ

№ 13



ԽՍՀ ԺՈՂ. ԿԵՆՏՐ. ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, ՍՈՍԿՎԱ 1931

891.71

ԱԼ-23

891.71

U-23

Ա. ԱԱՎԵԼՅԵՎ

25 NOV 2010

ՄՊ

ՍԵՆՅԱԿ № 13

Թարգմ. Լ. ԹԱՐԳՑՈՒՆ

9
8
7
6
5
4
3
2
1
0
34887

ԽՍՀՄ ԺՈՂՈՎՈՒՐԴ. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՄՈԽԿԴԸ

1931



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Յերկու քարտեղ	42
Զորանոցում	3
Ճարը ժպտում և	5
Կեղծ անցագիրը	6
Աստղերը խոսում են	8
Ուտել ենք ուզում	9
Փողոցում	10
Գոնե մի ատրճանակ	12
Խաղաղ կյանքը	14
Տարական հեռագիրը	16
Հրացանաձգություն	17
Կոչ	18
Վոլինցիների ապստամբությունը	19
Խորհրդակցությունը Դումայում	21
Միջնաբաները խորհրդակցությունը	23
Մոխիստը ների խորհրդակցությունը	25
Ցարը վճռում է	27
Մոլորված գնացքը	28
Տավրիկյան պալատում	29
Հեղափոխական շտաբը	31
Ժամանակավոր կոմիտեն վորոշում և	34
Վոստիկանները հերթում	35
Նախկին մինիստրների ձերբակալումը	36
Իվանովի և Խաբալովի զրույցը	38
Ժողովուրդը Տավրիկյան պալատում	39
Յերկու միլիոնը սեղանի տակ	40
Դավադիրները	41
Ամենուրեք դավաճանություն	43
Ցարը զիջում է	44
Խորհուրդը	46
Կերեսսկին	48
Հեռագեր	51
Միլյուկովը կամզեց ժամանակավոր Կառավարություն	53
Միլյուկովի ճառը	55
Իվանովի զորքը	56
Ցարական գնացքում	58
Վարշավայի կայարանում	60
Միլիոնդ յերկաթգծի արհեստանոցում	61
Միլիոննի փողոց № 12 տանը	63
Հեղափոխությունը դեռ նոր և սկսվել	66

ՅԵՐԿՈՒ ՔԱՐՏԵԶ

Պետրողբաղի զորքերի հրամանատար գեներալ Խաբալովի առանձնասենյակի պատից կախված եր մի մեծ քարտեզ:

Մազմական գործողությունների քարտեզն եր դա, վորի պայմանական նշաններն եյին — դրոշակիկները՝ ֆրոնտ, հաստ և գծերը՝ յերկաթուղին: Յեռանկյունիները՝ բերդեր: Շրջագծերն ու կետերը՝ քաղաքներ: Յերևում եր, վոր գերմանական զորքերը գրավել եյին արդեն ուստական նահանգներից շատերը:

Դրոշակիկները ձգվում եյին Բալտիկ ծովից մինչև Սև ծովը: Սակայն գեներալ Խաբալովը չեր նայում ուղմական գործողությունների քարտեզին: Մեղանի վրա փուլած եր մի այլ քարտեզ — Պետրողբաղի հատակագիծը: Խաբալովը ուշադրությամբ դիտում եր այդ հատակագիծը, վորի վրա ցցված եյին դրոշակիկներ ու մատիտով ինչ վոր նշաններ եյին արված:

Մեղանի մոտ Խաբալովի զեմ նատել եր ժանդարմեյական գեներալը: Նա համբերությամբ սպասում եր, թե ի՞նչ կասեր Խաբալովը:

— Ուժի տեղաբաշխումը ճիշտ ե կատարված, — վերջապես խոսեց Խաբալովը, ոլուխը բարձրացնելով: — Ամեն կողմից պաշտպանված ե քաղաքի կենտրոնը:

— Այս դրոշակիկները նշանակում են հետևակ վոստիկանություն, — ասաց ժանդարմական գեներալը քարտեզին նայելով — սրանք՝ հեծյալ ջոկատներն են, իսկ սրանք՝ կազակային զորամասերը։ Յեռանկունիները ցույց են տալիս պահեստի գնդերի զորանոցները, կետերը վոստիկանական տեղամասերն են։ Քաղաքը բաժանվում է 16 թաղամասերի։ Յուրաքանչյուր թաղամասում վոստիկանության ոգնելու համար հատկացված ե մի գումարտակ զորք։ Հատուկ ջոկատները հսկում են բոլոր պալատները, մինիստրությունները, կայարանները, գործարանները, կամուրջները և արսենալը։ Հատակադիր վրա նրանք նշանակված են շրջագծերով։ Խաչաձևվող վայրում դրվելու յեն զինվորական ստուգիչ պահակախմբեր։ Բոլոր գործարաններին հաղորդված են հեռախոսների գաղտնի համարները՝ զորք կամ վոստիկանություն պահանջելու համար։

— Յերբ ե սպասվում խռովությունը, — հարցը եց Խաբալովը։

— Ամեն որ. — պատասխանեց ժանդարմական գեներալը, — գործարաններում տրամադրությունը տագնապային ե, դրան ավելացրեք շարունակվող պատերազմական անհաջողություններն և հացի պակասը։ Ներքին գործերի մինիստրը միջոցներ ե ձեռք առել, վորպեսզի հուզումներն սկսվելուն պես իսկույն ձերքակալվեն հեղափոխության առաջնորդները։

— Ամենից կարևորն այն ե, վորպեսզի բանվորությունը քաղաքի կենտրոնը չմտնի, — ասաց Խաբալովը, — մինիստրությունը, գլխավոր հեռախոսն ու

հեռագրատունը պետք ե անվտանգ լինեն։ Հարկավոր ե հերթ-հերթ գնդակահարել ամբոխին։ Հենց վոր ծայրամասից բազմությունը յերկա՝ անմիջապես կրակել, չսպասելով, վոր նորը հասնի։

— Ամեն ինչ նախաձեռնված ե, — ձայնեց ժանդարմական գեներալը, — գնդացիրները բերված են և վոստիկանները սկսել են վարժություններ կատարել։ Թույլ չենք տա, վոր բանվորությունը յերկար դիմադրի։ Վոր կողմից ել վոր նա քաղաքի կենտրոնին մոտենա, մերոնք նրանց դեմք կկտրեն — սրբով կամ մտրակներով, հրացաններով կամ գնդացիրներով։

ԶՈՐԱՆՈՑՈՒՄ

Պետրոգրադի բոլոր զորանոցները լեցուն եյին։ Պետրոգրադում կենտրոնացված եյին պահեստի գնդերը։ Նրանց վարժեցնում եյին հետագայում ֆրոնտուղարկելու համար։

Մթնում եր հունվարյան կարճ որը։ Վոլինյան գնդի զորանոցի թմբուկը զարկեց — հարկավոր եր քնել։ Աղոտ վառվում եր ելեկտրական լույսը։ Յեռահարկ նառերի վրա պառկել եյին զինվորները։

— Եգուց ստիպված ենք նորից ամբողջ որը ձյունը կոխկոտել, — նկատեց յերբորդ հարկի զինվորը — մինչդեռ գյուղից գրում են, վոր դաշտում աշխատող չկա...

— Իսկ ֆրոնտում ավելի վատ ե, — ասաց յերկորդ հարկի զինվորը, — նստում ես հոտած խրամատներում, վշալարի յետե... ուրախանում ես, յերբ քաղաք ես վերադառնում,

— Այսոր սպան նորից փշբեց ատամներս, — ձայնեց առաջին հարկի զինվորը, — նա ծեծում ե ինձ, իսկ յես ստիպված եմ լրել... Այլ կերպ չի կարելի: Սպասիր դու, կզա և իմ հերթը:

— Յերբ կոփմա սկսվեց, ասում եյին մի ամսում կվոչնչացնենք գերմանացիներին, մինչդեռ յերբորդ տարին ե, ինչ կովում ենք ևնրանք են մեզ հաղթում:

— Վորովինետև դավաճան են մինիստրները, ծախվել են գերմանացիներին:

— Իսկ ցարը, ու սկսեց ցածի հարկի զինվորը, սակայն նա չկարողացավ շարունակել, վորովինետև այդ բոպեյին միջանցքում լսվեց ծանր վոտնաճայն:

Սպան ներս մտավ — վոսկե ակնոցներով: Կանգնելով սենյակի մեջտեղը, գոռաց.

— Ո՞վ եր այստեղ խոսում:

Ամենքը լուցին Զորանոցում լսվում եր ծանր խոմից:

Սպան կասկածով նայեց, պատովեց կրունդների վրա ու դուռը շրփացնելով հեռացավ:

ՑԱՐԸ ԺՄՏՈՒՄ Ե

Տավրիկյան պալատում Պետական Դումայի նիստն եր: Զանգը տրվեց: Դումայի նախադահ Միլիայիլ Վաղիմիրովիչ Ռողոյանկոն, աթոռից բարձրանալով, ասաց.

— Նիստը հայտարարում եմ փակված:

Պատգամավորները դուրս յեկան:

Սյուների մոտ խմբված հարցնում եյին միմյանց,

— Ի՞նչ անել...

Պետական Դումայում իորհրդակցում եյին բուրժուազիայի ներկայացուցիչները, Բանվորության կողմից ուղարկված բոյլշիկ պատգամավորները վաղուց ձերբակալվել եյին և աքսորվել Սիրիս:

Սակայն բուրժուական ներկայացուցիչներն եւ դժգոհ եյին ցարական կառավարությունից:

— Մինիստրները կամ հիմար են, կամ դավաճան, — նկատեց Պետական Դումայի պատգամավոր՝ պատմության պրոֆեսոր ալեհեր Միլյուկովը — պարզ ե, վոր նման կառավարության շնորհիվ կհաղթվենք պատերազմում:

— Շրջեցի Փրոնտը... տեսա, ինչպես պատերազմի ժամանակ մեր զորքերը մնում եյին առանց արկերի, ինչպես ձմեռվան որը զինվորները ման եյին գալիս առանց սապոդների, — տաք շորերի, — ասաց պատգամավոր Գուչկովը, — լազարեթ եյին բերում զինվորներին, վոտները ցրտահար... վագոններից դուրս եյին հանում սառած դիակները ու փայտի նման դարսում իրար վրա:

— Զինվորները վախչում են Փրոնտից: Գիտե՞ք, վոր յերկու միլիոն դասալիք ունենք:

— Կարիք չկա մինիստրների ենտ խոսելու: Հարկավոր ե խնդրել ցարին, վորպեսզի նոր կառավարություն նշանակի: Այլապես հեղափոխություն կառաջնա ու կըշի թե կառավարությունը և թե ձեզ:

Հանկարծ բոլորը լուցին, վախեցած:

Այդ բոպեյին ներս մտավ Ռողոյանկոն:

— Յես նորին մեծությունից տեսակցություն եմ ինդրել ու հիմա դնում եմ ցարի մոտ, — ասաց նա:

Ու գնաց: Ցարը նրան առաջարկեց նստել:

— Զերդ մեծություն, — ասաց Ռողովանկոն, — աղաչում եմ իոփիել կառավարությունը: Հացի պակաս ե քաղաքներում, հաղորդակցությունը խանդարված ե: Շոգեմեքենաները, կառքերը վշանում են, — ժանդոտվում գծերի վրա: Գործարանները ամսեամիս պակասեցնում են արտադրանքը: Տարածվում ե սովոր ու ավելը...

Ցարը լուռ եր:

— Զերդ մեծություն, — մինիստր նշանակեք այնպիսի մարդկանց, վորոնց վստահում ե Դուման:

Ցարը դարձյալ լուռ եր:

— Զերդ մեծություն, — շարունակեց Ռողովանկոն խոպոտ ձայնով, — յեթե ասածս չանեք, հեղափոխություն կառաջանա: Կհնձեք այն, ինչ վոր ցանել եք:

— Ե՞ն, աստված կտա, կկառավարվենք. — ժպտաց ցարը:

Ու հասկացրեց, վոր տեսակցությունը վերջացած ե:

ԿԵՂԾ ԱՆՑԱԳԻՐԸ

Ամեն տեղ փնտրում եյին դասավագ զինվորներին: Գնացքը Մոսկվա հասավ: Ժանդարմները, վագոնները մտնելով, սկսեցին ստուգել յեկվորների անցագրերը:

Նրանց դեմ յելավ մի յերիտասարդ շիկահեր աղամարդ: Զախ ձեռքին նա բռնել եր ճանապարհորդական պայուսակ, իսկ աջով անցագիրը:

Ժանդարմն անցագիրը վերցնելով, հարցրեց.

— Վհրատեղից եք գալիս:

Ճանապարհորդը նշան արավ, թե ոռւսերեն չի հասկանում: Իսկ ժանդարմը, անցագիրը նայելով ասաց.

— Ֆին ե, Կուռավիոյից, վաճառական: Կարելի յեթողնել:

Ճանապարհորդը ցած իջավ: Գնաց ծանոթ բանվորի մոտ: Պայուսակից հանեց հեղափոխական կոչեր:

— Ցրիր ձեր գործարանում և զորանոցներում, — ասաց նա:

Մոսկվայից նա մեկնեց ուրիշ խոշոր քաղաքներ: Յուրաքանչյուր քաղաքում նա ուներ ծանոթ բանվորներ: Նա աշխատում եր գիշերել տարբեր բնակաբաններում: Նա ֆին չեր և վոչ ել վաճառական: Նա ապրում եր վոչ թե կուռավիոյում, այլ Պետրոգրադում:

Նա բոյլեկիյան կուսակցության Կենտրոնական կոմիտեյի անդամ եր:

Նա փետրվարին Պետրոգրադ վերադառնալով առաց.

— Ամեն ինչ պատրաստ ե: Զինվորները մեր կողմն են անցնելու: Փողոց հանեք բանվորներին:

ԱՍՏՂԵՐԸ ԽՈՍՈՒՄ ԵՆ

Փետրվարին պահնողդական բաժնի պետը զեկուցեց արտաքին գործերի մինիստր Պրոտոպալովին:

Պրոտոպալովը, ոթոցում ընկղմված, լսում եր անուշադիր:

— Ամենուրեք դժբոհություն... — ասում եր պահնորդը, — չեն վստահում կառավարությանը: Համալսարանական տոնի որը ուսանողները փոխանակ

„Боже, царя храни“, «Մարտելիեզ» եյին յերգում, Գաղտնի աշխատակիցները զեկուցում են, վոր հերթերում հայնոյում են մինհստրներին և արհամարհանքով արտահայտվում ցարի նկատմամբ: Գործարաններում ձեռքից-ձեռք են անցնում հեղափոխական թոռոցիկները, վորոնք բանվորության կովի յեն կանչում:

Թվում եր, թե Պրոտոպոպովը վոչինչ չեր լսում: Պահնորդը լոեց: Պրոտոպոպովը հորանջեց:

— Լսել եմ, վոր հեղափոխականներն ուզում են մինհստրներից մեկին սպանել, — ասաց պահնորդը:

— Բում, — անհանգստացավ Պրոտոպոպովը:

— Զեզ...:

— Զի հաջողվի, — ծիծաղեց Պրոտոպոպովը: Պահնորդը զբամացած նայեց խոսակցին:

— Յես վոչնչից չեմ մախենում, — հայթական ասաց արտաքին գործերի մինհստրը, — ուզում եք իմանալ, թե ինչու, մոտեցրեք ականջը: Աստղերի միջոցով դուշակել են ինձ: Դա ամենաճիշտ գուշակությունն եւ: Աստղերն ասում են, վոր յես յերկար եմ ապրելու և յես եմ լինելու Ռուսաստանի փրկիչը: Աստղերը խոսացել են՝ քանի վոր յես իշխելու յեմ, հեղափոխություն չի լինելու:

Պահնորդը անթարթ նայում եր Պրոտոպոպովին:

ՈՒՏԵԼ ԵՆՔ ՈՒԶՈՒՄ

Փետրվարին սոսկալի ցուրտ սկսվեց: Չյուն, ձյուն ամբողջ Ռուսաստանում, Բուքը ծածկել եր բոլոր յերկաթգծերը: Ալյուրով բեռնված գնացքը մնացել

եր ճանապարհին: Պետրովադում հացը չեր բավարպում:

Փետրվարի 23-ին սկսվեց խոռվությունը: Կանայք խմբերով դուրս յեկան վողոց:

— Հաց ենք ուզում, ուտել ենք ուզում, — զոռում եյին նրանք:

Վոչ միայն կանայք եյին դուրս յեկել, այլ և բանվորները: Յեկ աղաղակում եյին վոչ միայն — «հաց», այլ և — «կորչի ցարը»:

Ամբոխը տանում եր կարմիր գրոշակներ:

Գործադուլ եր հայտարարել հարյուր հաղարքանվորություն: Գործադուլավորները զբոհում եյին այն գործարանները, վորտեղ զեր շարունակվում եր աշխատանքը: Ուժով բացում եյին յերկաթե դարպանները, դուները, կանգնեցնում եյին մեքենաները: Վոստիկաններն սպառնում եյին սրերով ու ատրճանակներով: Սակայն գործադուլավորները ներս եյին խոռոչում: Բանվորներն ուրախ դիմավորում եյին նրանց: Գործադուլն անցնում եր գործարանից-գործարան:

Կամուրջների վրա կանգնել եյին վոստիկաններն հեծյալ և հետևակ պահակները: Նրանք իրագործում եյին Խաբալովի ծրագրը: Զեյին թողնում բանվորներին քաղաքի կենտրոնը հասնելի:

Վիբորդի կողմից զեպի քաղաք եր գնում համար քսան տրամվայը: Լիտեյնայա կամուրջի վրա վոստիկանները կանգնեցրին տրամվայը: Ցած բերին բոլոր բանվորական հագուստ ունեցողներին:

— Յետ դնացեք. ձեզ իրավունք չկա առաջ անցնելու:

Սակայն համառեցին բանվորները։ Շուտով Նեվան ծածկվեց շարժուն սև կետերով։ Դրանք այն բանվորներն եյին, վորոնց թույլ չտվին կամուրջով անցնել։ Նրանք սառույցի և ձյունի վրա նոր ճանապարհ հարթելով առաջանում եյին։ Ափերին կանգնել եյին պահակներ։ Նրանք քիչ եյին։ Պահակները դիտում եյին շուրջը և յերբ սպա չեր յերեւում, անխոս ճանապարհ եյին տալիս բանվորներին։

Բանվորները անցնում եյին Նեվսկի պղոսպեկտով։

ՓՈՂՈՑՈՒՄ

Յերեկոյան բանվորները հասան Նեվսկի պղոսպեկտը — ու վողոցում ել շարժվելու տեղ չմնաց։

Նեվսկին տարողինսակ ու տագնապալի տեսք եր ստացել։ Նեվսկիի վրա դեռ յերբեք այդչափ բազմություն չեր հավաքվել։ Հորձանքով գնում եյին մարդիկ — հեռվից յեկած բանվորները — հնամաշ հագնված։ Հետզհետեւ պակասում եյին կառքերն ու ավտոմոբիլները։ Ամբոխը գնում եր վողոցի մեջտեղով։ Փակվում եյին խանութները։ Ժամանակից շուտ իջնում եյին յերկաթե վարագույրները։ Լսվում եր հազարավոր վոտների անընդհատ դոփյունը։

Դանդաղ անցնում եյին տրամվայները՝ շարունակ զանգահարելով սակայն ամբոխը ճանապարհ չեր տալիս։ Ծրամվայները կանգնեցին, Բանվորները վագոնավարներից խեցին բանալիները։ Իսկ առանց բանալու տրամվայը չեր կարող շարժվել։

Իրար յետեից յեկան, շարվեցին տրամվայները։

Վոստիկանները հեռացան իրանց դիրքերից։ Նրանք հավաքվեցին թաղամասը, խմբված դուրս գալու։ Ամբոխը շպրտում եր նրանց վրա սառցի կտորներ, փայտ, քար, շիշեր։ Վոստիկանները կրակում եյին սին փամփուշտներով։ Սակայն սրանցից վոչ վոք չեր վախենում։

Փողոցում զինվոր չկար։ Կառավարությունը նրանց վակել եր զորանոցներում, վորպեսզի չկարողանային հեղափոխական ճառեր լսել։ Բայց բանվորները, զորանոցներին մոտենալով, աղաղակում եյին։

— Յեկեք մեր շարքերը...

Զինվորները, պատուհաններից զլուխները հանած, լսում եյին։ Ու միայն այն ժամանակ, յերբ մոտենում եր սպան, պահակը կանչում եր։

— Ցրվեցեք։

Զինվորները հեռանում եյին պատուհանից։

Յերեկոյան ամբոխը Նեվսկու վրա մեծ միտինգ կազմակերպեց։ Հոետորը կարմիր դրոշակը ճոճելով, գոռում եր։

— Կորչի՛ ցարը։

Հանկարծ անկյունից յերեաց կազակների ջոկատը։ Կազակներն արշավում եյին ուղիղ դեպի ամբոխը։

Տիրեց լուսթյուն, լսվում եր միայն հոետորի ձայնն ու ձիերի դոփյունը։ Ամբոխին հասնելով, կազակները, ձիերը սանձելով, բաժանվեցին խմբերի և զգուշությամբ շրջեցին միտինգը։

Այն ժամանակ բոլորը միաբերան կանչեցին։

— Մեզ հետ են կազակները, կեցցե՞ն կազակները։

Սակայն կազակները, չպատասխանելով, առաջ անցան...

Փետրվարի 25-ին գործադրութիւն մատնվեց ամբողջ քաղաքը։ Դործարանները չելին աշխատում էին։ Տրամփայնները գուրս չեկան պարկերից։ Դպրոցներում պարապմունք չեղակ ու թերթերը լույս չտեսան։

ԳՈՆԵ ՄԻ ԱՏՐՁԱՆԱԿ

Բոյլշեվիկները կոչ ելին ուղղել բանվորներին։
Եւ անհնար ե ապրել։ Ուտելիք չկա։
Հագուստ չկա։ Վառելիք չկա։

Ֆրոնտում արյուն ե, մահ։ Բանակւ քանակի յետեից, գնացք-դնացքի յետեից, ասես վոչխարների հոտ, մարդկային սպանդանոց են ուղարկում մեր զավակներին ու յեղբայրներին։

Քայքայվել ե յերկիրը։ Հաց չկա։ Ծավալվում ե սովը։ Հետագայում դրությունը կարող ե ավելի վատանալ։

Ո՞վ ե մեղավոր։

Յարական իշխանությունն ու բուրժուական են մեղավոր։ Նրանք են թալանում ժողովրդին, թե թիկունքում և թե ֆրոնտում։ Անվերջ ձգձգում են պատերազմը։ Ժողովրդին քշում են դեպի սպանդանոց։

Մենք ենք տանջվում։ Մենք ենք խորտակվում։ Քաղցում ենք։ Տնքում ենք

աշխատանքի ծանրությունից։ Մեռնում
ենք խրամատներում։

Բոլորդ դեպի պայքար, փողոցի
Վոտքի յելեք բոլորդ։ Կազմակերպվեց
եք պայքարի համար։ Արհեստանոցներում,
դործարաններում, թաղամասերում,
քաղաքներում ու գավաններում, դորանոցներում և ամբողջ Ռուսաստանում
կազմակերպվեք Ռուսաստանի սոցիալ
դեմոկրատական բանվորական կուսակցության կոմիտեներ։ Դրանք լինելու յեն պայքարի և ազատության կոմիտեները։

Բոլորդ դեպի պայքար։ Համախմբվեցիք
հեղափոխական կարմիր դրոշակի շուրջը։
Կորչի օարական միապետությունը։ Կորչի
պատերազմը։ Կեցցե ամբողջ աշխաբի
բանվորական յեղբայրությունը։

Բանվորներն յեկան բոյլշեվիյան կոմիտե՝ զենք պահանջելու։

— Այժմ յեթե հրացան ունենանք, հնարավոր կլինի անմիջապես ցրել վոստիկանությունը։

Յեվ յուրաքանչյուրը խնդրում եր.

— Ընկեր, տվեք գոնե մի ատրճանակ։

Կոմիտեյի անդամները պատասխանում ելին։

— Վոչ մի ատրճանակ մեղանից չեք ստանա։
Ասենք թե վոստիկաններին ցրեցիք, բա չգիտե՞ք, վոր մեր դեմ կանգնել ե մի ամբողջ բանակ-գնդացիրներով։ Ատրճանակով գնդացիրի դեմ չես կանգնի։ Վհչ։
Թե ուզում եք ատրճանակ ունենալ, ձեռք բերեք

զորանոցներից։ Խոսեք զինվորների հետ, մեր կողմը գրավեցեք նրանց, անջատեք նրանց իրենց սպաներից։ Զե՞ վոր զինվորները նույն գյուղացիներն են, միայն թե զինվորական համազգեստով, Յեթե զինվորները մեր կողմն անցնեն, այն ժամանակ մենք կհաղթենք։

ԽԱՂԱՌ ԿՅԱՆՔԸ

Այդ ժամանակ ցարը գտնվում եր Մոգիլյովում։ Այստեղ եր տեղափորված ամբողջ զորքերի հրամանատարության շտաբը։

Ցարն ապրում եր նահանգապետի տանը։ Մուտքի մոտ կանգնել եյին պահակները։ Պարտիզում հսկում եր սլալատական վոստիկաննությունը։

Հարևան տան կտրի վրա դրված եյին գնդացիրները — գերմանական ողանավեր յերեալուն պես կրակելու համար։

Մոգիլյովում մթնում եր որը։

Առավոտյան ցարը խորհրդակցություն եր ունեցել շտաբի պետ գեներալ Ալեքսեևի հետ — պատերազմական խնդիրների մասին։ Ժամի մեջին նախաճաշել եր ցարը։ Նախաճաշից հետո ավտոյով մեկնել զբոսանքի։ Ժամի հինգին — թեր, թեյելուց հետո աչքի յեր անցկացրել Պետրոգրադից յեկած նամակները։ Ժամի ութին — ճաշ։

Ամսի 25-ին ճաշից առաջ նա կայսրուհուց հեռագեր ստացավ։

«Դուքսությունը վատ ե քաղաքում»։

Յերեկոյան ցարը մի քանի անգամ դոմինո խաղ ու տարվեց։ Իսկ հետո հեռագրեց Խաբալովին, Պետրոգրադ։

«Հրամայում եմ վաղն և յեթ քաղաքում դադարեցնել անկարգությունները»։

Միանգամայն հանգիստ եյին և ցարը, և պալատականները։ Զե՞ վոր Պետրոգրադում գտնվում եյին և վոստիկաննություն, և կողակներ, և զինվորություն։ Միթե նրանք չպետք է կարողանային քաղցած կանաց դիմագրել։

Պալատականներից մեկն որպիր եր պահում։ Այդ որը նա գրեց։

«Այստեղ սկսվել ե խաղաղ կյանքը։ Ամեն ինչ լինելու յե առաջվա նման։ Ցարից վոչ մի փոփոխություն չի կարելի սպասել։ Այսոր ցարն ուրախ տեսք ունի»։

ՑԱՐԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ

Կեռ գիշերին մինիստրական խորհուրդը նիստ գումարեց։

Նախագահը բոլորին նայելով՝ ասաց։


— Հարկավոր ե մի քանիսին պաշտոնանկ անել...

Հուղվեցին մինիստրները։ Նախագահի հաջացքը կանգ առավ Պրոտոպոպովի վրա։

Պրոտոպոպովը վեր թռչելով բացականչեց։

— Քանի դեռ յես իշխանության գլուխն եմ կանգնած, հեղափոխություն չի լինելու։ Յերաշխավորում եմ։

— Պրոտոպոպովը խելազարվել ե, ինչպես մինչ որս այդ չեյինք նկատել. — ՀՀնջաց մինիստրներից մեկը մյուսի ականջին։



— Խոսվությունը ճնշելու ամբողջ լիազորությունն այսուհետեւ հանձնվում եւ գեներալ Խարալովին, — ասաց նախագահը, — զորքներին հրամայված եւ կրակել մարտական փամփուշտներով:

ՀՐԱՑԱՆԱԳԳՈՒԹՅՈՒՆ

Փետրվարի 26-ի ամբողջ որը Վոլինյան գունդը հսկում եր Զնամենսկայա հրամարակը: Զինվորներին տեղափորել ելին ներքնահարկերում, կեղոսու ախոռներում, դռնապանների բնակարաններում:

Զյունում եր: Զինվորներն, ոչախի: Առաջ նստած, թեյում ելին: Հաց դեռ չելին բերել:

— Ավելի լավ ե ամբողջ որը այսուեղ քաշ գալ, քան փողոցներում մարդ սպանել: — ասում ելին զինվորները:

— Հարկավոր ե լավ մտածել, տղերք, լավ մտածել, թե ումն եք կրակում, ժողովուրդը մերին ե, նրանք մեր հարսդատոներն են, — ասում եր դասակի հրամանատարը, զինվորներին մոտենալով:

Կեսորին Գոնչարյան փողոցով դեպի Նեվսկին եր գնում հոկա բազմություն:

Վազելով բակը, մտավ սպան — շինելն արձակած: Նա գոռաց.

— Վերցնել հրացանները, շուտ դուքս գալ փողոց:

Վաշտը շղթա կապեց փողոցում, Բազմությունը մոտենում եր լեռնացած ալիքի նման: Նշան արվեց: Վոլինցիները կրակեցին: Սակայն համարյա ամբողջ զինվորությունը կրակում եր դեպի վեր — ողում:

Սպան զինվորներից մեկին մոտենալով գոռաց.

— Ուր ես կրակում: Ժողովրդին կրակիր, ժողովրդին, մեկ առ մեկ կրակիր, վոր տեսնեմ:

Վերեկց հանկարծ ճարճատեց գնդացիրը, կրակում ելին դիրք մտած վաստիկանները:

Ամբոխը ցրվեց: Մարդիկ փախչում ելին կուզեկուզ, զիգզագներով: Վոմանք սեղմվում ելին տան պատերին, բռունցքներով ծեծում ելին յերկաթե փակդարպանները:

Հիրավորները ընկնում ելին ձյունի վրա: Բարձրանում ելին, փորձում փախչել, սակայն նորից զլորվում ելին:

Գիշերվա մեկին զինվորները քաշվեցին զորսնոցները: Սպան խաղաղված տրամադրությամբ ասում եր նրանց.

— Այ, պատերազմում ել այսպես ե լինում, այսոր լավ փորձ կատարեցիք: Սակայն այնքան ել գոհ չեմ ձեր աշխատանքից: Բայց դրա համար ել շնորհակալ եմ: Հաջորդ անգամ աշխատեցեք ավելի լավ կրակել:

Զինվորները լուռ ելին: Զորանոցումն սպան ասաց.

— Հրամայում եմ առավոտը ժամի 8-ին հարձակում կատարել: Իսկ հիմա քնել:

Կ Ո Զ

Բանվոր ընկերներ!

Մեզ կրակում են:

Պետքոգբագի փողոցներում հոսում երանվորական արյունը: Բոնակալ ցարի ծառաները կրտկում են քաղցած բանվոր:

ներին, վորոնք փողոց դուրս գալով բողոքում են տիրող կամայականության ու քաղցի դեմ:

Այս որերին մենք անզոր գտնվեցինք ցարի հավատարիմ վոստիկանությանն ու զինվորությանը դիմադրելու։ Զկարողացանք նրանց հարվածին հարվածով պատասխանել, մահին՝ մահով։ Մենք անզեն եյինք։ Մեզ վրա սուր եյին քաշում, ձիերի վոտների տակ կոխկոտում եյին մեզ և անզեն ժողովուրդը ստիպված երփախչել։

Պարզ ե, վոր այս ծանր որերին, բանվոր դասակարգն զգաց ավելի, քան յերբեք, վոր առանց պրոլետարական ուժեղ կազմակերպությունների, առանց մարտական խմբերի, առանց բանակի ոգնության հնարավոր չի հաղթել թշնամուն, տապալել բոնակալությունը։

Այս ծանր որերն հասկացրին և այն, վոր մեր զինվորները միշտ խոնարհաբար չեն մասնակցում յեղբայրասպան կովին։ Կեցցեն կազակները, վոր Զնամենսկայա հրապարակից քշեցին հեծյալ վոստիկաններին։

Իսկ Պետական Դուման, այդ կեղծ ժողովրդական իշխանությունը՝ հանցավոր լուսաթյուն ե պահում։ Պետական Դուման

խուլ ու համը ե ձեանում ժողովրդի ցավերի հանգեց:

Ընկերներ! Թող դադարի կյանքը քաղաքում, Թող անգործության մատնվեն բոլոր գործարանները, Փաբրիկները, արհեստանոցներն ու տպարանները։ Թող հանգչի ելեկտրականությունը։ Կոչ ենք անում ձեզ — հարվածել բոնակալական կամայականությունը և բողոքի ընդհանուր գործադուլ կազմակերպել։ Խաբալովը հրամայել ե մեզ ամսի 28-ին աշխատել, իսկ ձեզ պայքարի յենք քանչում, ընդհանուր գործադուլի։

Կեցցե՛ հեղափոխությունը։

Այսպես եյին գրում հեղափոխականները։

ՎՈԼԻՆՑԻՆԵՐԻ ԱՊԱՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ

Այդ գիշեր զինվորները չքնեցին։ Հավաքվեցին դասակի հրամանատարները։

Ու շահում սկսեցին խորհրդակցել։

Վորոշեցին — առավոտյան վեցին վեր կենալ, վերցնել հնարավոր յեղածին չափ մարտական փամփուշտներ, զենքեր ու սկսել խոռվությունը։

Ապա դուրս յեկան ուրիշ վաշտերի հետ ել խոնելու։

Ամենքն ել հասկանում եյին, վոր սկսվում ե վտանգավոր գործը։ Ձեզ յեթե չհաջողվի, յեթե ոգնության չգան մյուս գնդերը, պարզ ե, վոր խոռվության նախաձեռնողները պիտի գնդակահարվեն։

Ժամը վեցին զինվորները պատրաստ եյին արդեն։
Սքիզներով փամփուշտներ իրար յետեց գուրս եյին
հանում դնդի պահեստից։ Դրաններն ու պայուսակ-
ները լեցնում եյին փամփուշտներով։

Յեկ ահա լուսաբացին խփեց թմբուկը։ Յերկար
միջանցքում զինվորները շարք կազմեցին։ Սպան ներս
մտավ։ Հրամայեց։

— Զգաստ.

Ու ասաց.

— Բարե՛, տղերք։

Սակայն զինվորները փոխանակ ըստ սովորականի
պատաժխանելու ռառողջություն ենք ցանկանում,
ձերդ մեծապատվություն», աղաղակեցին։

— Ել չենք կրակի ժողովրդի վրա։ Ուռում...

Սպան հեալով մոտեցավ զինվորներից մեկին, ու
շնելի կոճակից քաշելով գոռաց։

— Ի՞նչ, ինչ ասացի՞ր...

Զինվորն ուղղեց հրացանը։ Սպան յետ քաշվեց։
Աջ ձեռքը գրապանը տանելով բռնեց ատրճանակը, իսկ
ձախով թուղթը ցույց տալով՝ ասաց։

— Լսեցե՞ք — «Հրամայում եմ վաղն և յեթ դադա-
րեցնել խռովությունները մայրաքաղաքում»։ Սա
ցարի ուղարկած հեռագիրն է, հասկանմամբ եք...»

Սակայն զինվորները հրացանների կոթերով գար-
կում եյին քարե հատակին։ Խլացնող ձայնը լցրել եր
զորանոցը։ Սպան գունաթափ, բակը նետվեց։

Զինվորները շտապ մոտեցան պատուհանին, կրակոց։
Սպան յերեսն ի վայր փուլեց ձյունի վրա։

Փողհարներն ահազանդ տվին։

— Ուր գնալ, — աղաղակում եյին զինվորները։
— Պրեոբրաժենցիների մոտ, կատովցիների մոտ,
դեպի Մոսկովյան զորանոցը՝ համախմբվելու համար։
Հանդիպեցին բանվորական հոսանքի, Բանվորները
կանգ առան։ Զգիտեյին, զինվորները կրակելու եյին
իրենց վրա, թե վոչ։ Զինվորները զվարկները շար-
ժելով՝ աղաղակեցին։

— Մեկ ենք բոլորս։ Գնանք պայքարելու ազա-
տության համար։

Բանվորներն ու զինվորները միտցած ուղևորվե-
ցին դեպի Տավրիկյան պալատ։

ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԴՈՒՄԱՅՑՈՒՄ

Ծերունի շվեյցարը, կրծքին շքանշաններ, հանում
եր ներս մանողների վերաբերուները։ Փայում եր
պարկետ հատակը, Դումայի ավագները հավաքվում
եյին Ռողպյանկոյի կարինետում ժողովի։

Սեղանի շուրջը, կենտրոնում նստել եր Ռողպյան-
կոն, արջի նման մեծ ու ծանր։ Հսկա հայելին անդ-
րադարձնում եր նրա ճարպոտ ծոծրակը։

— Նորին մեծությունից հրաման եմ ստացել
դուման ցրելու մասին, — ասաց Ռողպյանկոն, — կա-
ռավարությունն անգոր ե հիմա։ Միայն Դուման կա-
րող ե հեղափոխությունը ճնշել։ Յեկ յեթե մենք
ցրվենք, ել ոչ ե սանձնելու տիրող խորոշություն-
ները։ Սակայն իրավունք չունենք ցարին չենթարկվե-
լու։ Մենք հեղափոխականներ չենք։

Ժողովականները վորոշեցին։

Դուման յենթարկվելու յե ցարական հրամանին:
Դուման ընդհատելու յե իր աշխատանքները: Սակայն
այժմ թող վոչ վոք չհեռանա Տավրիկյան պալատից:
Լինելու յե մասնավոր խորհրդակցություն: իհարկե
վոչ մեծ դահլիճում, վորտեղ կայանում եյին Դու-
մայի նիստերը, այլ կողքի փոքր սրահում:

Ու Դումայի անդամներն անհամարձակ մեկտեղ-
վեցին:

— Գնանք մինիստրների մոտ, — ձայնեց մեկը, —
թող գեներալ նշանակեն՝ ապստամբությունը ձնշելու
համար:

— Թագնիկել ե կառավարությունը, — պատասխա-
նեց յերկրորդը... միևնույն ե, նա չի կարող ոգնել:
Զգիտեյին անելիքը:

— Հարկավոր ե զգուշ լինել, — նկատեց Միլյու-
կովը, — ախր դեռ չգիտենք ով ե հաղթելու: Սպասենք:
Տեսնենք ինչպես են դեպքերը ծավալվելու:

Այդ բոպեյին շնչառապ ներս մտավ կերենսկին:

— Ապստամբել ե զորքը: Ել չի կարելի դանդա-
ղել: Բանվորներից, զինվորներից բաղկացած մի ահ-
ռելի հոսանք մտտենում է Տավրիկյան պալատին: Վեր-
ցրեք իշխանությունը: Ավտո տվեք ինձ, դնամ ժողո-
վորդը հանգստացնելու:

Բոլորը դարմացած ու հուսալի նայեցին կերեն-
սկուն: Թվում եր, վոր նա յերբեք չեր վախենա ամ-
բոխից:

— Կերենսկին Դումայի անդամ ե, նա մեզ չի
խայտառակի, — մտածում եյին պատգամավորները, —

նա սոցիալիստ ե... կապված հեղափոխականների հետև
Ժողովուրդը կլսի նրան:

Կերենսկին գնաց ժողովրդին դիմավորելու:

Պետական Դումայի անդամները վորոշեցին ընտ-
րել Դումայի ժամանակավոր կոմիտե: Թող նա կար-
գագրի, ինչ վոր պետք ե:

Իսկ այդ ժամանակ ժողովուրդը, Տավրիկյան պա-
լատի պահակներին քշելով, հեղեղի պես ներս խու-
ժեց: Հարևան շենքում արդեն կրակում եյին ներս
մտնող զինվորները:

— Գնդացիր, գնդացիր ե պետք այդ սրիկաներին
սրբելու համար, — մտածում եյին Պետական Դումայի
անդամները: Ու ժամանակ դուրս յեկան ապստամբ-
ների հաղթանակը վոչնչացնելու:

ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՃՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Մինիստրները նիստ ունեյին իլինսկիյ պալատում:
Խաբալովը կարդաց տպագրված սեփական հայտարա-
րությունը:

Պետրոգրադը պաշարողական դրույան մեջ ե հայտա-
րավում: Արդելվում ե ամեն տեսակ հավաքույթ: Յերեկոյան
ժամը 9-ից ուս փողոց դուրս գալ արգելված ե:

Սակայն մարդ չկար՝ այդ հայտարարությունը փո-
ղոցում փակցնելու համար:

Խաբալովը զորք ուղարկեց ապստամբ վոլինցիների
դեմ: Անցնում եր ժամանակը, բայց ուղարկված զոր-
քերի մասին վոչ մի լուր:

— Միթք բանակը ջարդվել ե. — հարցնում եյին մինհստրները Խաբալովին, — միթք ամբողջ զորքից մի մարդ ել չի մնացել, վոր մեղ լուր բերի...

Խաբալովը լուռ եր նա ինքն ել չեր հասկանում: Կորել եր զորքը, գետնի տակ անցել:

Վերջապես Խաբալովն իմացավ, վոր ուղարկված զորքը Լիտեյնայա հրապարակը հասնելով, փոխանակ հեղափոխականներին կրակելու, միացել եր ժողովրդին:

Հանկարծ մեկը գոռաց.

— Ամբոխը մոտենում ե պալատին:

Անմիջապես հաճգցրին ելեկտրականությունը, վորպեսզի, ժողովուրդը պատուհանների լույսը տեսնելով, չկրակեր:

Մինհստրները մի քանի ըոսկե նստեցին մթին լուռթյան մեջ: Զեյին խոսում: Վերջապես ծառաներից մեկը ներս մտնելով՝ ասաց.

— Սուտ ասացին, պալատի մոտ ժողովուրդ չկա:

Ցերք նորից ելեկտրականությունը վառեցին, տեսան ինչպես մինհստրներից մեկը դուրս յեկալ սեղանի տակից: Սակայն նրա վրա վոչ-վոք չծիծաղեց, քանի վոր իրենք ել նույն դրությանն եյին...

Այդ ըոպեյին մինհստրների խորհուրդը հեռագրեց ցարին:

«Խանդրում ենք մեղ պաշտոնից ազատել»:

Գիշերը մինհստրները ցրվեցին: Դա յեղալ նրանց վերջին նիստը: Խաբալովը անցավ աղմիրալտեյստվությունը գնդացիրներ... մի քիչ զորք:

ՏԱՐԸ ՎՃՌՈՒՄ Ե

Առավոտյան ցարը Ռողջանկոյից հեռագիր ստացավ: «Դրությունը վատանում ե: Հարկավոր ե մինչև վաղը շտապ միջոցներ ձեռք առնել, այլապես ուշ կլինի: Հասել ե վերջին ժամը—վճռվելու յե հայրենիքի և ցարական ընտանիքի ճակատագիրը»:

Սակայն ցարը չհավատաց:

Կեսորին ստացվեց մինհստրական խորհրդի հեռագիրը—պաշտոնից ազատվելու մասին:

Ցարը պատասխանեց—մինհստրության արգելվում ե իրենց դիրքերից հեռանալ: Զորք ու գեներալ ե ուղարկելու Պետրոգրադ:

Գեներալ Ալեքսեյեվը հիվանդ պառկել եր: Սակայն յերբ կարդաց ցարի պատասխանը, վոր ստացել եր Պետրոգրադ ուղարկելու համար, իսկույն գնաց ցարի մոտ:

— Զերդ մեծություն, հարկավոր ե զիջել, — ասաց նա.

— Վոչ մի դեպքում. — պատասխանեց ցարը. — յես արդեն վճռել եմ և չեմ փոխելու վճիռա:

Ճաշին ցարի մոտ նստել եր զեներալ Իվանովը—հաղթանակ միջրուքավոր ծերունի:

— Պետքոգրադում ապստամբում են պահեստայինները և գործարանայինները, — ասաց ցարը:

— Ցերք Խաբալինում խռովություն սկսվեց, յերկու գունդ զորքով գնացի և առանց մի կրակոցի խաղաղեցրի ազստամբությունը, — պատասխանեց Իվանովը:

— Այդ դեպքում ուղեորմեք Պետրոգրադ, ձեզ եմ

հանձնարարում անկարգություններին վերջ տալը, —
ասաց ցարը,

Գեներալ իվանովը դուրս գալով դիմեց իր աղյու-
տանտին.

— Գնալու յենք Պետրովը խաղաղեցնելու, —
հարկավոր ե այստեղից ապուխտ, ալուր գնել ազգա-
կաններին նվեր տանելու համար:

Իվանովի տրամադրության հանձնվեց յերկու հեծ-
յալ և յերկու հետևակ գունդ, Պետրովի այս գումար-
տակը և կոյլտի գնդացիրային կոմանդան:

Իսկ ցարը վորոշեց գնալ ծարսկոյե Սելո ընտա-
նիքին տեսության:

ՄՈԼՈՐՎԱԾ ԳՆԱՑՔԸ

«Առավոտյան հինգին ճանապարհ ընկանք: Մաքով
միշտ ձեզ հետ եմ: Սքանչելի յեղանակ եւ հուսով եմ,
վոր լավ եք ու հանգիստ: Ֆրոնտից շատ դորք ե
ուղարկված»:

Ցարը ցարուհուն այսպես հեռագիր ուղարկեց
գնացքից: Յոթ վագոնից բաղկացած ցարական գնացքը
գիշերով դուրս յեկավ Մոգիլյովից: Գնացքն ուղիղ
մեկնում եր Պետրովը:

Սկզբում ամեն ինչ լավ եր: Կայարաններում դի-
մավորում եյին չինողիկներն ու պոլիցիան:

Ցարական շքախումբը վոչնչի մասին չեր անհան-

գոտանում:

— Ամբողջ 300 տարի Ռումանովսկը են Ռուսաս-
տանին իշխել, միթե այժմ նրանք խորտակվելու յեն
յերեք որում, — ասում եյին պալատականները, — բա

ել ինչու համար են պոլիցիան, ժանդարմաները, կո-
ղակները, գվարդիական գնդերը:

Սակայն մի կայարանում յերկաթգծի ծառայող-
ներից մեկը, գնացքին մոտենալով ասաց.

— Ել հնարավոր չե առաջ շարժվել...

Հետագա կայարանները գրավել եյին հեղափոխու-
թյան կողմն անցած զինվորները: Գնացքը վերադար-
ձավ Բոլոգոյե: Ցարը վորոշեց Բոլոգոյե կայարանից
պտույտ գործելով տեղ հասնել, սակայն դարձյալ չթո-
ղին: Ասացին, վոր քանդված ե մոտակա կամուրջը:
Փաստորեն կամուրջը քանդված չեր, բայց մոտ եր
հեղափոխական գորքը:

— Զերդ մեծություն, — նկատեց պալատականնե-
րից մեկը. — Հնարավոր չե Ցարսկոյե Սելո հասնել:
Ուր կիրամայեք գնալու...

— Ուր վոր գնանք, միենույն ե ինձ համար, —
պատասխաննեց ցարը, — միայն թե ուղիղ հեռագրալար
լինի: Գնանք Պակով: Ու գնացքը շարժվեց Պակովի
ուղղությամբ:

ՏԱՎԻԿՅԱՆ ՊԱԼԱՏՈՒՄ

Ապստամբ զինվորներն ու բանվորները գրավեցին
արքենալը: Զեռաց հավատակեցին քառասուն հազար
հրացան, վոտքի կանգնեցին նաև ուրիշ գնդեր: Բա-
ցին բանտի դռները: Հրդեհեցին Շրջանային Դատա-
րանը ու պահնորդական բաժինը: Սպաներին, ավ-
տոներից ցած բերելով, զինաթափում եյին:

Տավրիկյան պալատ տանող բոլոր փողոցները մի
եյին բազմությամբ:

Ավստամբ նախառախիներով լցված ավտոն, ամբոխը ցրելով, սլանում եր դեպի Տավրիկյան պալատ։ Ճանապարհին հանդիպում ե մի հսկա բեռնակիր ագոտո, վորը ծանրությունից հազիվ ե շարժվում։ Ամեն կողմից ցցվել են սվինները։ Ապրանքային պլատֆորմի վրա կանգնել են բանվորները, զինվորները, ուսանողները, կանայք։ Ձեռքերին հրացան։ Կատաղի թափով քշելով ձիերը՝ անցնում են գվարդիական հրետանավորները։ Փայլիլուն սրերով սալյուտ են տալիս ժողովրդին։

Ամբոխը գոռում ե։

— Ուռուա։

Յերեխանները մոտենում են ձիերին։ Զինվորները կրակում են ողում։

Փողոցի մեջտեղում միտինգ ե։ Հոետորները մնելը մյուսի յետևից բարձրանում են սայլի վրա։ Ամբոխը խմբված լուսմ ե նրանց։ Այսուղ են նաև կալանավորի շորերով մի քանի կին, տղամարդ — բանտից աղատվածներն են դրանք։

Տավրիկյանի մոտ հոծ բազմություն եւ Փողոցներում ճարճատում են խարույկները։ Ցուրտ ե։ Տավրիկյան պալատը փայլում ե բոցի պես։ Բոլոր սենյակներում վառվում ե ելեկարականությունը։

Հոետորները — վերաբերու հազած, բայց առանց գլխարկի, խոսում են Տավրիկյան պալատի ձյունածածկ աստիճաններից։ Ծափահարում ե ամբոխը։ Ե առանց ջոկելու թե ով ե խոսողը՝ գոռում։

— Ուռուա...։

Դեռ զինվորության մի մասը չի միացել ժողովրդին։ Դեռևս տանիքներում դիրք են բունել վտափիկանները՝ գնդացիրներով։ Սակայն ապստամբներն արդեն վեցըրել են քաղաքը։

Մի շարք տներից բարձրանում են բոցեղեն սյուներ։ Վառվում են Շրջանային դատարանի ու ժանդարմական վարչության շենքերը։

Տավրիկյանի ՀՀ 11—13 սենյակներում արգեն հավաքվել են բանվորներից և զինվորներից ընտրված պատգամավորները։ Տասյերկու տարի առաջ, 1905 թ. կազմվել եր բանվորական պատգամավորների խորհուրդ։ Այս ժամանակ բանակը դեռևս յենթարկվում եր իշխանությանը, և խորհուրդը յերկար չավորեց։ Այժմ զինվորությունը բանվորության հետ ե։ Դրա համար ել խորհուրդը կոչվում ե Բանվորական և Զինվորական Պատգամավորների Խորհուրդ։

ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՇՏԱԲԸ

Տավրիկյան պալատի քառասուն և յերկույթերորդ սենյակում տեղափորվել եր Խորհրդի հեղափոխական շտաբը, վորը կազմված եր ապստամբած գնդերի ներկայացուցիչ՝ մի քանի զինվորներից և հեղափոխական սպաններից։

«Ամբողջ Պետրոգրադ» ուղեցույցից պոկելով պլանը, նրանք սկսեցին նշանակել, թե վորտեղ ե գտնվում ապստամբ զորքը և վնրտեղ — Խաբալովի գնդերը։

Սակայն յերեաց, վոր ստույգ վոչ վոք վոչինչ չգիտեր, Անընդհատ զանգահարում ելին հեռախոսները,

գանազան տեղերից պահանջում եյին ոժանդակ զորք:
Ճոկատներ եյին ուղարկված բոլոր կայարանները:

Գիշերը լուր բերին, վոր խուլիդանները մտադիր
են հարձակվել գինու պահեստի վրա:

— Յեթե պահեստը գրավեն, նշանակում ե ապս-
տամբությունը մի գդալ ջրի մեջ կիսեղդվի, — ասում
եյին Հեղափոխական շտաբում:


— Յերեք հարյուր սվիններով շարժվել դեպի պա-
հեստը, — հրամայեց հեղափոխական շտաբը: Բանվոր-
ներն ու զինվորները թող իրար յետևից գան: Յեթե
դինու պահեստի վրա հարձակվելու լինեն, կրակել:
Վոչ մի զիջում:

Սենյակներից մեկը դարձրել եյին զենքի պահեստ:
Այնտեղ եյին պահում հրացանները, ատրճանակները,
փամփուշտները, գնդացիրների ժապավենները: Տավ-
րիկանի կտրին թառել եր չորս գնդացիր. թեև նրան-
ցից չեր կարելի կրակել, քանի վոր վազելին չլինելու
պատճառով չեյին յուղվել, բայց և այնպես յեռանդ
եյին ներշնչում:

Միջանցքներում գլխարկները գլխի տակ դրած, քնել
եյին զինվորները: Քնել եյին հրացանները բռնած:

Պետական դումայի անդամները, առանց բաճկոնն
ու ֆուակը հանելու քնել եյին ոթոցների բազկաթոռ-
ների, սեղանների, հատակի վրա:

Հանկարծ քառասուն և յերկույթերորդ սենյակի դռւոն
աղմուկով բացվեց ու ծանրաքայլ ներս մտավ Ռող-
դյանկոն: Մռայլ եր: Նստեց բազկաթոռի վրա ու, ար-
մուկներով սեղանին հենվելով, ասաց.



Ուշ գիշերով հավաքվեցին պահորդները:

— Պարոնայք սպաներ, Պետական Դումայի ժամանակավոր Կոմիտեն զրավել ե իշխանությունը՝ քաղաքում կարգը վերականգնելու համար, — ու մի քիչ լոելուց հետո բարկացած ավելացրեց, — այսուհետև ձեր շուարը յենթարկվում ե Ժամանակավոր Կոմիտեին:

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿՈՄԻՏԵՆ ՎՈՐՈՇՈՒՄ Ե

Ահա թե ինչու Դումայի ժամանակավոր Կոմիտեն վորոշեց վերցնել իշխանությունը:

— Յես խոռվարար չեմ, և վոչ ել հեղափոխական, — ասում եր Թողոջանկոն, — չեմ ուզում իշխանությունը զրավել առանց ցարական հրամանի, Բայց չե վոր հիմա կառավարություն դոյություն չունի, իսկ յերկրու չի կարող առանց իշխանության մնալ: Ամեն կողմից ինձ վրա յեն հարձակվում: Հեռախոսը մի ըռուե հանդիսաւ չեն թողնում: Հարցնում են, բնչ անել... ինչ եք կարծում, չվերցնել իշխանությունը:

— Իհարկե վերցնել, Միխայիլ Վլադիմիրովիչ, — խորհուրդ եյին տալիս Պետական Դումայի անդամները: Դրանում վոչ մի ապատամբություն չկա: Փախել են մինհատրները, ուր և Պրոտոպոպովը — հայտնի չե, վոչ վոք չի իմանում. ալթաք և նրանց փոխարինել, թե վոչ: Յերբ ամեն ինչ անց կենա ու ցարը նոր կառավառություն նշանակի, այն ժամանակ իշխանությունը կհանձնենք: Իսկ յեթե վոչ, զո՞նե մեր ձեռքին կինչ զեկը և վոչ թե սրիկա բանվորների: Վերջիվերջո բնչ անել, կայսերական իշխանությունը այնպես ե պահվէլ, վոր շներով ել ման դաս, չես գտնի...

Յեվ Դումայի ժամանակավոր Կոմիտեն վերցրեց իշխանությունը: Դումայի Կոմիտեյի անդամները տհաճությամբ լսում եյին, ինչպես հարևան սրահում զինվորական որկեստը նվազում եր հեղափոխական յերգեր: Սակայն ստիպված եյին հաշտվել հեղափոխության հետ, քանի վոր ուժը նրա կողմն եր:

Զինվորական գնդերը — սպաների հետ ու դրոշականերով մոտենում եյին Տավրիկյան պալատին:

Ծոդզյանկոն, նբանց զիմավորելով, խրոխտ ձայնով կանչում եր.

— Ուղղակառ մարտիկներ, կարդ պահպանեցեք. լսեցեք ձեր սպաներին, թույլ չտանք, վոր մեր թըշնամի անիծված գերմանացին խորտակի մեր մայր Ռուսաստանը:

— Հետո վերադառնալով Դումայի Կոմիտեն՝ փնթփնթաց.

— Գոնե զորքը ֆրոնտից շուտ համեր ու կարգի գտեր ամեն ինչ,

ՎՈՍՏԻԿԱՆՆԵՐԸ ՀԵՐԹՈՒՄ

Այստեղից այստեղից լսվում եյին գնդացիբային զարկերը: Տանիքներից կրակում եյին վոստիկանները:

Ժողովուրդն ամենից առաջ սկսեց փնտրել վոստիկաններին, ու գտնելուն պես կրակում եր նրանց:

Վոստիկանները վախեցան: Հասկացան, վոր նրանց միակ փրկությունը ձերբակալվելն ե: Իսկույն հանեցին իրենց պաշտոնական զգեստը, ու գաղտնի, վորպեսզի ճանապարհին նրանց վոչ վոք չնկատի, հաստն Տավրիկյան պալատը: Յեվ այնտեղ ահա կազ-

միւս մի տարորդինակ հսկա հերթ, վոստիկանների վոլորվող ռպոչ։ Նրանք անհամբեր սպասում եյին, թե յերբ իրենց պիտի թույլ տային բակ մտնելու։

— Բախտավոր... ասում եյին ծայրում կանգնած վոստիկանները, յերբ առաջինը բակ եր մըսում, — նրան արդեն ձերբակալեցին, ել վոչչից չի վախենա։

Ապատամբ գնդի զինվորներից մեկը, մի վոստիկան բերելով Տավրիկյան պալատը, խնդրեց։

— Ձերբակալեցեք սրան, բանտում նա վողջ կմնա, իսկ քաղաքում անմիջապես կսպանեն, հայրս ե...

Ներկայացավ ժանդարմական վողջ վարչությունը, ու գեներալից սկսած մինչև ոստիմիստրը ձերբակալվեցին։ Յերբ ժանդարմները տեսան, վոր իրենց վոչ մի վտանգ չի սպառնում և վոր Դուման հովանավորել ե իրենց, խրախուսվեցին։

— Միւնույն չե, թե ում ծառայել. Պրոտոպապովին, թե նողոյանկոյին, — խոսում եյին նրանք, — միայն թե մեզ ոռմիկ տան։ Մենք գեռ պետք կդանք նոր կառավարությանը։

Յեկ ուրախացած ժանդարմները կապեցին կարմիր ժապավեն։

ՆԱԽԿԻՆ ՄԻՒՍԻՍՏՐՆԵՐԻ ԶԵՐԲԱԿԱԼՈՒՄԸ

Մի ուսանող անցնում եր Տավրիկյան պալատի մոտով, նրան մոտեցավ թանկագին քուրք հաղած մի մարդ, նա հոգնած եր ու հաղիվ եր կարողանում կանգնել։

— Ասացեք խնդրեմ, դուք ուսանող եք, — հարցուց նա։

— Ուսանող եմ։

— Յես Պրոտոպապովն եմ, տարեք ինձ Դումա։ Հուղված ուսանողն խկույն փնտրեց կերենսկուն։ Ճանապարհին հայտնում եր բոլորին։

— Տանում եմ Պրոտոպապովին...

Ահադին քազմություն հավաքվեց։ Գոռում եյին։

— Ել ինչու սպասել, տեղն ու տեղը վոչչացնել դրան։

Զինվորներն ուղղեցին սվինները. մեկը բռնեց Պրոտոպապովի կոկորդը։

Այդ բռպեյին հայտնվեց կերենսկին։ Գունատ եր. մի ձեռքը վեր եր բարձրացրել, ասես յերդում եր տալիս, իսկ մյուս ձեռքը առաջ պարզելով, ահոելիուն գոռաց։

— Զհամարձակվեք ձեզք տալ այդ մարդուն։ Հականեղափակական մեծ վոճրագործ ե նա։

— Ձերդ մեծապատկություն, — աւաց Պրոտոպապովը դողդոջուն ձայնով, — ձեզ եմ հանձնվում։

Կերենսկին Պրոտոպապովին տարավ առանձին սենյակ, Գնում եր մուայլ ու հաղթական, ասես հանցավորին տանում եր գլխատելու։ Զինված մարդիկ շղթա կապեցին նախկին մինիստրի շուրջը։

Ամբոխը լուռ յետ քաշվեց։

Յերբ դուռը շրմակալով փակվեց, և յերբ կերենսկին առանձին մնաց Պրոտոպապովի հետ, սովորական ձայնով ասաց։

— Նստեցեք, Ալեքսանդր Դմիտրիկիչ...

ԻՎԱՆՈՎԻ ՅԵՎ ԽԱԲԱԼՈՎԻ ԶՐՈՒՅՑԸ

Առավոտյան ժամի իննին, Մոգիլյովից մեկնելուց
առաջ, դեներալ Իվանովը ուղիղ հեռագրալարով կապվեց Խաբալովի հետ։
— Բարեկ, խոսում ե գեներալ Իվանովը։
— Առողջություն եմ ցանկանում, ձերդ գերազանցություն, յես Խաբալովն եմ։
— Վ՞որ զորաբամասերը խաղաղ են և վ՞որը վոչ։
— Իմ արամադրության տակ, գերազույն հրամանատարության շենքում կա չորս գվարդիական վաշտ և յերկու մարտկոց։ Մնացած զորքն անցել ե հեղափոխականների կողմը։
— Պարեն ունե՞ք։
— Վ՞ոչ։
— Վ՞որ կայարաններն են պահպանվում։
— Հեղափոխականները գրավել են բոլոր կայարանները, Նրանք են հսկում։
— Բոլոր մինիստրությունները կանոնավոր գործում են։
— Հեղափոխականները ձերբակալել են մինիստրներին։
— Շատ գենք ե անցել հեղափոխականների ձեռքը։
— Քաղաքի ամբողջ գենքը։
— Քաղաքի վոր մասերում ե կարդ պահպանվում։
— Ամբողջ քաղաքը գտնվում ե հեղափոխականների ձեռքին։

ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ՏԱԼՐԻԿՅԱՆ ԹԱԼԱՏՈՒՄ

Բացվեց մարտի առաջի որը։ Կերենսակին ձգվեց ոթոցի վրա, հոբանջեց ու քմահաճ ձայնով ասաց։

— Լուսանում ե, ելի ներս ե խռոմելու ամբոխը։ Զինվորությունը հուպ ե տալիս ամեն կողմից։ Ելուժ չմնաց նրանց դիմադրելու...»

Ցեվ իսկապես, թե պալատի շուրջը, և թե ներսում դժվար եր անցնել ամբոխի միջից. վումանք գնում ելին, վոմանք գալիս։ Վխտում եր ժողովուրդը, Նրանց վոտների տակ ասես իջնում եր հատակը։

Ուսանողները, Տավրիկյան պալատի հատակագիծը բռնած, հարցնողներին բացաբառում ելին, թե ինչպես կարելի յե ցանկացած սենյակը գտնել։

Սղջիկներն ու տղաները բոյսկառուտների համազգեստ հագած անցաթղթեր ելին գրում։ Թեյ ելին տալիս։ Գթության քույրերը կապէստում ելին վերագորներին։

Տապալվել եր հին իշխանությունը, նորը դեռ չկար։ Թույլտվությունների և ոգնության համար դիմում ելին Տավրիկյան պալատ։

Սյյտեղ ելին բերվում ձերբակալվածները։ Գալիս ելին գնդերի և զործարանների ներկայացուցիչները։ Գալիս ելին յերկաթգծի աշխատողները իմանալու, թե վոր գնացքները կարող են թողնել, վորը՝ չե։ Գալիս ելին պաստաբաններ, խանութպահներ, շոֆերներ ու շատ-շատերը։

Մի կառապան յեկավ ու խնդրեց, վորպեսզի ողնելին կորսված ձին գտնելու, Տարակյան մի պաշտոնյա

ծառային ուղարկեց իմանալու, թե արդյոք կարելի
յէ շներին տանել Տավրիկյան պարտեզը զբոսանքի,

Ու նորանոր այցելուները վկառում եյին պալա-
տում, Սակայն ներս մտնելիս յերկու հոսանքի յեր-
բաժանվում ամբոխը: Զինվորներն ու սպաները
դիմում եյին դեպի Դումայի Կոմիտեն, իսկ բանվոր-
ները № 13 սենյակը, վորոտեղ գտնվում եր Խորհրդի
Գործադիր Կոմիտեն:

ՅԵՐԿՈՒ ՄԻԼԻՈՆԸ ՍԵՂԱՆԻ ՏԱԿ

Ինչ վոր մարդ յերկու զինվորների հետ ներս
մտավ Դումայի Ժամանակավոր Կոմիտեն, Բերելով
ծանր ծրար, հեռացավ: Ծրարում գտնվում եյին ոտար
պետությունների հետ կնքած Ռուսաստանի գաղտնի
պայմանագրերը:

— Սրանք պետական ամենակարևոր թղթերն
են, — ասաց Կոմիտեյի անդամներից մեկը, — հարկա-
վոր ե պահել, մինչդեռ սենյակում վոչ պահարան կա,
վոչ ել սեղաններում գզրոց:

— Այդ դեպքում սեղանի տակ պահենք, — հայտ-
նեց մեկը, — սփռոցի տակից վոչինչ չի յերկա: Վոչ
վոք չի կարող մտածել, թե այսակեղ ե պահկած:
Ու ծրարը դըին սեղանի տակ: Կանաչ թակը
սփռոցը իջեցրին մինչկ հաստակը:

Դարձյալ ինչ վոր մարդ զինվորներով ներս մտավ
ու բերեց ահազին կապոց: Բացին, Կապոցում կար
յերկու միլիոն ռուբլի թղթադրամ: Այդ կապոցն ել
դրին սեղանի տակ:

Պետական Դումայի անդամներից մեկը, Միլյուկո-
վին մոտենալով առաց:

— Պավել Նիկոլայեվիչ, այսպես շաբունալել չի
կարելի, մենք խո չենք կարող սեղանի տակից մու-
սսստանը կառավարել: Հարկավոր ե կառավարու-
թյուն կազմել Միլյուկովը, զրասեղանին մոտենալով,
թղթի կտորի վրա ինչ վոր ազգանուններ գրեց: Այս-
պես կազմվեց նոր կառավարությունը:

Ռոդզյանկոն խռպիտ հայնոյում եր.

— Մրիկաները Խորհրդից իմացել են, վոր յես պատ-
րաստվում եյի ցարի մոտ գնալ, զրա համար ել հրա-
մայել են գնացք չտալ... Պահանջում են, վոր ինձ հետ
մեկնի նաև իրենց ներկայացուցիչը մի գումարտակ
դորքով: Ինչպես չե. յետ նրանց հետ ցարի մոտ գնա-
ցողը չեմ... Այժմ Խորհուրդը մեր քթի տակից հափ-
շտակում ե իշխանությունը: Մեր ձեռքից խլեցին
սենյակը. հիմա յել իշխանությունը կլինեն: Իսկ մենք
վոչինչ չենք կարող անել, քանի վոր նրանց հետ ե
զինվորությունը:

ԴԱՎԱԴԻՐՆԵՐԸ

Միլյուկովը կերենսկուն առաց:

— Յես ձեզ եմ կացըել նոր իշխանության
մինիստրական ցուցակում: Դուք կլինեք արդարադա-
տության մինիստր:

— Դուք ծանրթ եք Խորհրդի վորոշումներին, — պա-
տասխանեց կերենսկին, — նոր պետականությունը բուրժուա-
կան ե և Խորհրդի անդամներից վոչ մեկը չի կարող

պետական կազմի մեջ անցնել։ Իսկ յետ Խորհրդի անդամ եմ ու իրավունք չունեմ Խորհրդից հեռանալու։

Յեվ իսկապես, յեթե Կերենսկին Խորհրդից հեռանալու լիներ, կղաղաբեյին նրան հավատալուց։

— Բա ինչ անել, — հարցրեց Միլյուկովսոս խորամանկ նայեց։

— Կաըող եմ Խորհրդին համոզել. — շտագ պատասխանեց Կերենսկին։ — Մինիստր պիտի դառնամ. . .

Մարտի յերկուսի գիշերվա 4-ին Դումայի ժամանակավոր կոմիտեյում նատել եյին Թողզյանէն, Շուլդինն ու Գուչկովը, Յերեքով ատում եյին հեղափոխությունը, դրա համար յերեքով ուզում եյին փրկել ցարական կարգերը։

Ռուգյանէնը և Շուլդինը կալվածատերեր եյին, իսկ Գուչկովը — խոշոր առևտրական ձեռնարկի տեր։

Հանկարծ Գուչկովը գուռը բանալիով կողակեց։

— Հարկավոր ե գաղտնի ու արագ գործել, — շահնշաց նա, — առանց վոչ վոքի հարցնելու, առանց վոչ վոքի հետ խորհրդակցելու. . . վորպեսզի Խորհուրդը չիմանա. . . ցարը պարտավոր ե գահից հրաժարվել, հիմի այլ կերպ չի կարելի։ Սակայն Ռուսաստանի համար նոր թագավոր ե պետք, Հարկավոր ե նրա շուրջը համախմբել այն ամենը, ինչով վոր հնարավոր ե հեղափոխությունը տապալել։ Յես անմիջապես կմեկնեմ ցարի մոտ հրաժարականը վերցնելու, հրաժարական հոգուտ ժառանգի։ Սակայն ցանկանում եյի, վոր ինձ հետ ուրիշն ել գար. . .

— Յես կդամ ձեզ հետ, — ասաց Շուլդինը։

Առավոտյան վեցին յերկուսով նստեցին ավտո և յերբ սկսվեց լուսաբացը, նրանք արդեն Վարշավյան կայարանումն եյին։

— Յես Գուչկովն եմ, Պետական Դումայի անդամը, պետական կարենոր գործով մեղ անհրաժեշտ ե Պոկով գնալը Հրամայեցեք գնացք տալ։

— Լսում եմ, — պատասխանեց կայարանասլետը։

Քամն բոպե անց շոգեկառքը մոտեցավ կառամատույցին, փնչաց ու մի վազոնանոց գնացքը շարժվեց։ Գուչկովսո ու Շուլդինը մեկնում եյին ցարական կարգերը վրկելու։

ԱՄԵՆՈՒՐԵՔ ԴԱՎԱՑԱՆՈՒԹՅՈՒՆ

Իսկ այդ ըստելին Տակրիկյան պալատում զարթնեցին բանվորներն ու զինվորները. վորոնք յերրորդ որն եր, ինչ քնում եյին հատակի վրա։

Քանի-քանի զար անցավ, քանի քանի մարդ գնդակահարվեց, կախեց մինչև վոր ձեռք բերվեց ազատությունը։

Գերմանական արկերը քանի-քանի մարդ ջարդվուր արին, քանի-քանի մարդ զոհ գնաց քաղցին, հիվանդություններին, մինչև վոր վողջ մացածները վճռեցին։

— Ել այսպես չի կարելի. . .

Դրանք եյին, այժմ մինխատրական պավիլոնում ձերբակավածները, վոր իրենց ամբողջ կյանքում հրաժարական եյին, իսկ դիմուրները պատասխանել են.

— «Точно так», «никак нет».

Իսկ այժմ ուժը զինվորությանն եւ ծանկացածը կաբող ե անել զինվորությունը:

Նրանք հաղթեցին, բայց չգիտեյին ինչ աներ Պատրաստ եյին գնալ բոլորը նրանց յետելից, ովքեր իրենց հեղափոխական եյին անվանում, Հավաստում եյին ամենքին, և Պետական Դումայի անդամներին, և կերենակուն, և նոր կառավարությանը:

Իսկ նրանց շուրջը ամենուրեք դավաճանություն եր: Նրանք ուժ ունեյին, իսկ թշնամին խորամանկություն: Դումայի ժամանակավոր կոմիտեն բանակցել եր գեներալ Իվանովի հետ:

Կերենսկին մտածում եր, թե ինչպես մինխատր դառնա ու միշտամանակ մնա հեղափոխականների առաջնորդ: Մանավանդ յերբ Խորհրդի Գործադիր կոմիտեյում ընտրվել եյին պատահական, անվստահելի մարդիկ...

Իսկ Շուլցիննու Դուչկովը գաղտնի Պոկով մեկնեցին — Բուսաստանի համար նոր ցար ընտրելու,

ՑԱՐԸ ԶԻՉՈՒՄ Ե

Այդ ժամանակ ցարական գնացքը մոտենում եր Պոկովին:

Յերբ պալատականներն իմացան, վոր չեն թողնում գնացքը Ցարսկոյե Սելոյին մոտենա և վոր Պետրովրադն անցել ե ազստամբների ձեռքը, իրար անցան:

Հին աղմիրալը, ցարի բարեկամը, վագոնից վագոն անցնելով, գոռում եր.

— Սպասեք դեռ... Բոլորիս կախելու յեն լապտերներից, այնպիսի հեղափոխություն սպասի լինի, վոր դեռ վոչ մի տեղ չի յեղել:

— Այ թե որի հասանք, համ... ասում եյին մյուսները, —և ինչո՞ւ պատահեց, հօք...

Մնացածները լուր եյին: Ասես թաղման եյին գնում:

Յերեկոյան ցարական գնացքը Պոկով վերադարձավ: Պլատֆորման մութն եր ու դատարկ: Գնացքին մոտեցավ կուզլիկ մի ծերուկ գեներալ — Հյուսիսային ֆրոնտի հրամանատար՝ Ռուզովին:

Պալատականները, նրան շրջապատելով, հուզված հարցրին:

— Զորքը դեռ հուսալի յե, մեղ կոզնե՞ք: Այժմ ինչ անել:

— Այժմ ինչ անել, — թունոտ պատասխանեց Ռուզովին, — հարկավոր ե հաղթողներից զթություն աղերսել...

Մարտի մեկին, յերեկոյան ժամի լինին, գեներալ Ռուզովին մտավ ցարի վագոնը: Նստեցին սեղանի շուրջը, դեմ առ դեմ: Սեղանի վրա դրված եր ոազմական քարտեզը: Սակայն գեներալ Ռուզովին ձեռքով քարտեզը ծածկելով սկսեց խոսել Պետրովրադի դեղքերից:

Նա յերկար խոսեց: Պատմեց, թե ինչ եր կատարվում Պետրովրադում: Թե ինչպես քաղաքի բոլոր վիճական գնդերն անցան հեղափոխականների կողմը:

— Հարկավոր ե նոր մինիստրներ նշանակել, վորոնք պատասխանատու լինեն Պետ. Դումայի առաջ:

— Յես պատամխանառու յեմ աստծու առաջ, իբա-
վունք չունեմ գահս դիջել, —պատամխանեց ցարը:

Այն ժամանակ Խուզկին ասաց, վոր վոչ միայն
Պետրովրադն ե ապստամբել, այլ ամբողջ Ռուսա-
տանը: Մոսկվայում զորքն անցնում ե ժողովրդի
կողմը: Կրօնշտադտում անկարգություն ե և վոչ մի
կերպ չի կարելի դեմ առնել: Ապահով վոչ մի
տեղ չկա: Բալթյան նավատորմը յենթարկվում ե
Դումայի Ժամանակավոր Կոմիտեյին:

— Իսկ զ՞նքը, վոր Փրոնտունն ե, — հարցրեց ցարը:

— Եթե Փրոնտից զորք ուղարկենք, նրանք իս-
կույն կանցնեն ապստամբների կողմը, — պատասխա-
նեց Ռուզկին, — գեներալ Ալեքսեյեվը միակ յեկըը
դառնում ե նրանում, վոր հարկավոր ե նոր մինիստրներ
նշանակել այնպիսիներին, վորոնց նավատում ե Դու-
ման:

Ցարը մոտեցավ վագոնի պատուհանին, նայեց,
դարձյալ նստեց ու թույլ, անտարբեր ձայնով ասաց.

— Հեռագրեցեք Ռուզյանկոյին, վոր նշանակվում
ե մինիստրների Խորհրդի նախադահ: Թող նա ընտրե-
մացած մինիստրներին:

Ռուզկին դուրս յեկավ ու հանդիպած սպային
ասաց.

— Հրամայեցեք հեռագրիչին, վորպեսզի ուղիղ հե-
ռագրալարով կանչել տա Ռուզյանկոյին.

ԽՈՐՃՈՒՐԴԸ

Փետրվարի 27-ին Տավրիկյան պալատում ըացվեց
բանվորներից ու զինվորներից ընտրված Բանվորա-

գինսվորական պատգամավորների Խորհուրդը: Ու այդ
որվանից անընդհատ գումարվում ելին ժողով-մի-
տինդներ:

Խորհուրդն ընտրեց Գործադիր Կոմիտե, վորի կազմի
մեջ անցան գլխավորապես մենշևկներ ու եսերներ:
Գործկոմը վճռում եր գործերը, իսկ Խորհրդում ճառ
ելին առում:

Սկզբում սրահում աթուներ կային, բայց հետո,
յերբ տեսան վոր տեղերը չեն բավականացնում, նըս-
տարանները դուրս տալան: Բանվորներն ու զինվոր-
ները կանգնած ելին ճառը լսում: Մեկը մյուսի յե-
տերը աթոռի վրա բարձրանալով ասում ելին.

— Մենք Վոլինսկիյ գնդից ենք:

— Մենք Պրեոբրաժենսկիյ գնդից:

Ու բոլորն ել ճառից հետո բացականչում ելին.

— Յերդվում ենք պաշտպանել հեղափոխությունը:
Նախադահը, սեղանի վրա կանգնած, բռնել եր զանդը:
Պատուհանի մոտ նստել եր Գործկոմի անդամներից
մեկը և շուրջը բոլորած զինվորների թելաղբանքով
գրում եր:

Հրաման № 1 բանակին և նավատորմին. «Բոլոր վաշ-
տերին, գումարտակներին, հեծելավաշտերին, մարտ-
կոցներին և այլ զրամասերին — անհապաղ ընտրել
զինվորական և նավատիական կոմիտեներ:

Յուրաքանչյուր վաշտից ընտրել մի սկանդամա-
կոր — Խորհրդի համար»

Պետական գործերում յենթարկվել միայն ձեր Կո-
միտելին ու Խորհրդին:

Պետական Դումայի հրամանները կատարել միայն
այն ժամանակ, յերբ նրանք չեն հակասում Խորհրդի
հրամաններին:

Զենքերը հանձնել զինվորական կոմիտեյին: Սպա-
ներին զենք չտալ:

Վերացնել ծառայությունից դուրս պատվի՝ առնելը:
Փոխել «Ճերդ գերազանցություն», «Ճերդ մեծություն»
և այլ տիտղոսները: Զինվորների հետ խոսել «դուք»-ով:

Այս հրամանը հրատարակվեց մարտի մեկին, և
հանկարծ Պետական Դուման, սպաներն ու զեներալ-
ներն իրար անցան:

— Խորհուրդը քայլայում ե բանակը, — աղաղա-
կում ելին բոլորը միասին:

Յեվ իսկապես այդ հրամանը քայլայեց հին բա-
նակը: Զինվորը դարձավ ազատ քաղաքացի:


Այդ որվանից զինվորն սկսեց միայն Խորհրդին
հավատալ:

ԿԵՐԵՆՍԿԻՆ

Խորհրդի Գործադիր կոմիտեն վորոշեց.

«Քանի վոր զինվորներն ու բանվորները դեռ պատ-
րաստ չեն և չեն կարող իշխանությունը վերցնել, թող
պետությունը լինի բուրժուական: Խորհրդի անդամ-
ներից վոչ մեկը չպիտի ընտրվի այդ կառավարության
անդամ»:

— Իսկ յեթե հանկարծ բանվորներն ու զինվոր-
ները չհամաձայնվեն իշխանությունը բուրժուազիա-
յին հանձնել, — հարցրեց Գործկոմի անդամներից մեկը:



Յարը հանձնում ե իր հրաժարականը:

— Անհրաժեշտ ե, վոր յերկար խոսեք, — խորհուրդ
ելին տուլիս բարեկամները, — այդ դեպքում բանվորներն
ու զինվորները կհոգնեն ու կամաձայնվեն ձեզ հետ:

Զեկուցողը շատ յերկար խոսեց: Խորհուրդը համա-
ձայնվեց, վորպեսզի պետությունը բուրժուական լինի:

Հանկարծ կերենսկին, աթոռի վրա թռչելով, աղա-
ղակեց.

— Հավատում եք ինձ, ընկերներ:

— Հավատում ենք, — պատասխանեցին բոլորը
միաբերան:

— Ընկերներ, — ձայնը ավելի բարձրացրեց կե-
րենսկին, — սրտանց եմ խոսում: Յես պատրաստ եմ
հենց այսեղ բոլորիդ ներկայությամբ կյանքս նվիրել:
Ունկընդիրները հուզվեցին:

— Ընկերներ, — ասաց կերենսկին, — կաղմակեր-
պիել ե նոր ժամանակակիոր կառավարություն և յես
ստիպված եմ առանց ձեր թույլատրության պատաս-
խանել: Յես համաձայնիւ եմ արդարադատության
մինիստր դառնալ: Սյժմ իմ ձեռքումն են գտնվում
նախկին իշխանության ներկայացուցիչները, Յես
պաշտպանելու յեմ ձեր կարծիքները: Յես հանրապե-
տական եմ: Յես կարգադրել եմ, վորպեսզի խկույն
և յեթ ազատեն Սիրիում աջսորված մեր ընկերնե-
րին: Խրախուսում եք իմ վորոշումը: Համաձայն եք
ինձ ձեր ներկայացուցիչն հաշվել կառավարության մեջ:

— Սյահ, այս, — զուռում ելին ամենքը:

Զինվորներն ու բանվորներն աղաղակում ելին.

— Խրախուսում ենք: Ճիշտ ե: Կեցցե՛ կերենսկին,
ինդրում ենք:

Կերենսսկին սրահից դուրս վագեց: Նա շտապում
եր Միլյուկովին հաղորդելու, վոր ամեն ինչ հաջող
անցավ:

ՀԵՌԱԳՐԵՐ

Մարտի 2-ի գեղեցրը, ժամի 3-ին Ռոդզյանկոն մո-
տեցավ հեռագրի ապարատին: Նրան Պակովից կանչել
եր գեներալ Ռուզակին:

Հեռագրիչը թիվթիվացնում եր.

«Հաղորդեցեք գեներալ Ռուզակուն, վոր ապարա-
տին մոտենում ե Պետական Դումայի նախագահ՝ Ռոդ-
զյանկոն»:

Ապարատը լոեց: Սպասում եր պատասխանի:
Դառնում եր կետերով ու գծերով շարված նեղ
ժապավեճնը:

Սկսվեց հեռագրական խոսակցությունը:

— Սպարատի մոտն ե գեներալ-ադյուտանտ Ռուզ-
ակին: Բարեկ ձեզ, Միխայիլ Վլադիմիրովիչ: Այսոր, յե-
րեկոյան ժամի 7-ի մոտերը ցարը Պակով ժամանեց:

Նորին մեծությունը արտահայտեց իք վերջնական
վճիռը ու ինձ լիազորեց հայտնել ձեզ, վոր որենսա-
վճիռը ու ինձ լիազորեց հայտնել ձեզ, վոր որենսա-
վճիռը ու ինձ լիազորեց հայտնել ձեզ, կազմակերպելու
արություն կտրփի ձեզ, կազմակերպելու
միանձնարարության հետ միասին: Այս մանիֆեստը
կարող եր այսոր, մարտի 2-ին հայտարարել «Պակով»
մակագրությամբ»:

Ռուզակի

— Յերեկ նորին մեծությունն ու դուք հաշվի չեք
առնում այն, ինչ վոր այսեղ կատարվում ե: Տեղի

յե ունենում ամենահռելի հեղափոխություններից մեկը։ Ժողովրդական ցասումն այնպես և բռնկվել, վոր դժվար թե հնարավոր լինի դեմն առնել։ Զորքը վերջնականապես բարոյազգել ե, վոչ միայն չի լսում, այլ և սղառնում ե սպաներին։ Արյունին զությունից աղատ մնալու համար, ստիպված եմ յեղել բոլոր մինիստրներին, բացի ուազմածովային մինիստրից, բանտարկել Պետրոպավլովսկիյ ամբողում։ Շատ եմ վախենում, վոր յես ել նույն դրությանը մատնիեմ, վորովհետեւ ագիտացիան ուղղված ե այն ամենի դեմ, ինչ ավելի չափավոր ե ու սահմանափակ իր պահանջներում։

Անհրաժեշտ եմ համարում ձեզ հայտնել, վոր այն, ինչ յենթադրվում է ձեր կողմից, բավարար չե, և դինաստիայի հարցը դրված ե կտրուկ։

— ԶԵ՞ք կարող ասել, թե դինաստիայի հարցը ինչ կերպ և լուծվելու։

Որոշյանկո

— Յավոք սրտի, պիտի ասեմ, Նիկոլայ Վլադիմիրովիչ, վոր Պետական Դումայում միացան ամբողջ Պետրոգրադի և Յարսկոյե Սելոյի կայազորները։ Նույնը կրկնվում ե մնացած քաղաքներում։ Ամեն տեղ զորքն անցնում ե Դումայի և ժողովրդի կողմը. այնպես վոր ցարի հրաժարեցման խնդիրը գնալով սուր կերպարանք ե ստանում։ Գեներալ Իվանովի ուղարկումն միմիայն յուղ ավելացրեց կրակի վրա, վորը աեղի յե տալու փոխադարձ կոտորածի, Դադարեցրեք զորքի առաքումը, քանի վոր նրանք չեն գործում ժողովրդի դեմ։

Որոշյանկո

— Յավում եմ, Միխայիլ Վլադիմիրովիչ, ապագայի մասին։ Անհրաժեշտ ե այնպիսի միջոց գտնել վորը անհապաղ հանգստություն առաջներ։

Որոշում

— Դժբախտաբար, մանիքիեստն ուշացել ե։ Անհրաժեշտ եր հրատարակել իմ հեռագրից անմիջապես հետո։ Ժամանակն անցել ե։ Յետ չես բերի։ Ել վոչինչ չեմ կարող ասել։ Յես բարի գիշեր եմ ցանկանում, յեթե միայն այս որերին հնարավոր ե հանգիստ քնել...

Որոշում

Որոշումին հասկացավ, վոր ցարն արդեն դահնկեց ե արված ու անվերադարձ։ Բոլոր գեներալներին ու ֆրոնտների հրամանատարներին նա անմիջապես հագորդեց Մոդյանկոյի հետ ունեցած խոսակցությունը։

Ցերեկը Մորգուկին դարձյալ գնաց վարդոն—ցարի մոտ Ու աշխատեց համոզել հրաժարական տալու մասին։ Յարը դեռ հակառակում եր, նա հույս ուներ զորքի ու ֆրոնտի վրա։ Սակայն ժամի 3-ին հեռազիր ստացվեց, վորոնտի վրա Պետրոսի հրամանատար վեց գեներալներն և նավատորմի հրամանատար աղմիրալները գլել եին։

«Ցարը պետք ե հրաժարվի գահից»։

Այն ժամանակ միայն ցարը զիջեց...

ՄԻԼՅՈՒԿՈՎԸ ԿԱԶՄԵՑ ԺԱՍԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

— Մոդյանկոն ձեզ խնդրում ե բանակցության համար։

Խորհրդի Գործադիր Կոմիտեյի անդամները գնացին աենյակը, վորտեղ հավաքվել ելին Դումայի ժամանակն սենյակը, վորտեղ հավաքվել ելին Դումայի ժամա-

նակալոր կոմիտեյի անդամները, Դումայի և Խորհրդի
անդամները կիրթ բարեեցին իրար:

Սենյակը կարդի չեր բերված, ղես-ղեն ընկած
եյն դատարկ շշեր, հացի կառաւանք, ծխախոտի մնա-
ցորդ, Ռողոյանկոն, ոթոցի վրա բազմելով, սկսեց սո-
դախառն ջուր խմել: Միլյուկովը սեղանի վրա կռա-
ցած, ինչ վոր թղթեր ու հեռագրեր եր ջոկջուռ: Կո-
միտեյի մյուս անդամները կամ հոգնած նստել եյն,
կամ յերթեեկում եյն անկյունից-անկյուն:

— Մենք կազմել ենք նոր կառավարություն, —
ասաց Միլյուկովը, աշխատանքն ընդհատելով, — աջակ-
ցելու յե Խորհուրդը:

— Աղասիցեք ցարի ժամանակով բանտարկված ու
աքսորված մեր բոլոր ընկերներին, խոսացեք չխան-
գարել մեզ ազատ գրելու, խոսելու ու հարկ յեղած
ժամանակ ժողովակ կազմելու, վոստիկանությունը
փոխարինենք միլիցիայով. խոսացեք հեղափոխական
գնդերը Պետրոգրադից չեռացնել, այն ժամանակ
Խորհուրդը կաջակցի:

— Խոստանում ենք, — պատասխանեց Միլյուկո-
վը, — սակայն դուք ել պիտի աջակցեք ու աշխատեք,
վորակեսզի զինվորներն ելի յենթարկվեն սպաներին:
Ներկա ցարը, իհարկե, հրաժարական ե տալու, զահն
անցնելու յե տղային — Ալեքսեյին. բայց քանի վոր
նա դեռ փոքր ե, նրա փոխարեն իշխելու յե ցարի
յեղայր՝ Միլյայիլը:

— Մենք հանրապետության համար կովեցինք,
վոչ թե Միլյայիլի, — ասացին Խորհուրդի ներկայացու-
ցիները,

— Միլյուկովը չէ, — պատասխանեց Միլյուկովը,
Ալեքսեյը հիվանդոտ յերեխա... Միլյայիլը հմար
մարդ... ինչից վախենալ:

— Վոչ, — կրկնեցին Խորհրդի ներկայացուցիչ-
ները, — մեզ մոչ մի ցար հարկավոր չե — վոչ հիվան-
դոտ, վոչ ել հմար...

— Լավ, չիհճենք, — ասաց Միլյուկովը:

Յեզ Խորհրդի ներկայացուցիչների հետ մի կոչ գրեց
ժողովրդին, վոր կազմվել ե նոր կառավարություն:

ՄԻԼՅՈՒԿՈՎԻ ՃԱՌԸ

Տավրիկան պալատի Յեկատերինյան դահլիճը լի
յեր մարդկանցով: Բոլորը շնչերը պահած լսում եյն
արտաքին գործերի նոր մինիստր՝ Միլյուկովի ճառը:

Շատ խորամանկ եր խոսում: Սկսեց նրանից, վոր
հին կառավարությունը տալալված ե անվերադարձ:

Ճառն ընդհատվում եր ուրախ բացականչություն-
ներով:

— Այժմ հնարավոր ե խոսել նոր ցարի մասին, —
մտածում եր Միլյուկովը, — ժողովուրդը ուրախությու-
նից կորցրել ե իրեն, իհամաձայնվի: Հարկավոր ե
փորձել:

Ու հայտարարեց, վոր նոր ցար ընտրվելու յե նի-
կողայի վորդին Ալեքսեյը, բայց մինչեւ նրա մեծանալը
փոխարինելու յե ցարի յեղբայր՝ Միլյայիլը:

— Չեղավ, չեղավ, — գոռացին հասարակությու-
նից, — ելի նույն ցարական ընտանիքն ե իշխելու:
Միլյուկովը հասկացավ, վոր մտադրվածը չի անց-
նելու:

— Զայնս բոլորովին քաշվեց. ել չեմ կարող խո-
սել, — ասաց նա, դահլիճից հեռանալով:

— Մի ցարին հեռացնում են, տեղը մյուսին են
նշանակում, մեզ իրենց մատի փաթաթման են դարձրել,
ինչ ե... — աղաղակում եյին բանվորները:

Յերեկոյան սպաները սարսափանար վագեցին Մի-
լյուկովի մոտ:

— Զինվորներն սպառնում են գնդակահարել բո-
լոր սպաներին, յեթե նոր ցար ե ընտրվելու, — ասացին
նրանք:

ԻՎԱՆՈՎԻ ԶՈՐՔԸ

Գեներալ Իվանովը չգիտեր անելիքը: Նրա զորքերի
մի մասն անցել եր հեղափոխականների կողմը: Սա-
կայն մնացածների վրա յել չեր կարելի հույս դնել:
Գեներալը համոզված չեր — արդյոք հնարավոր եր մինչև
Պետրոգրադ հասնել. քանի վոր յերկաթուղայինները
կարող եյին ռելաբը քանդել ու ել չթողնել, վոր
առաջ գնա:

Դումայի ժամանակավոր կոմիտեյից ներկայացու-
ցիչ յեկավ Իվանովի մոտ:

— Ել կարիք չկա Պետրոգրադ գնալու մասին
մտածել, — ասաց նա, — Պետրոգրադի մթնոլորտը զին-
վորներին հեղափոխականացնում եւ Միակ հույսը Դու-
մայի վրա յե, վոր գուցե կարողանա քաղաքը խաղա-
ղեցնել: Ձեր գալը միայն կարող ե դրությունը վա-
տացնել, այն ժամանակ Խորհուրդը կդրավի իշխանու-
թյունը: Ու գեներալ Իվանովը հրաժարվեց Պետրո-
գրադ գնալու մտքից:

Սակայն Իվանովը արդեն ուղարկել եր Գեորգիին կի-
զումարտակը: Գիշերվա ժամը 3-ին գնացքը յերկու-
հազար զերոբիյան զինվորներով և ութ գնդաթիրնե-
րով մոտենում եր Լուգային:

Իսկ Լուգայում հնաբարոր չեր նույնիսկ յերեք
հարյուր հեղափոխական զորք հավաքել՝ դիմադրելու
համար: Պիտանի վոչ մի թնդանոթ ու գնդաթիր չկար:
Հեղափոխական կոմիտեն միայն սարսափ ազգելու հա-
մար պլատֆորմա յեր հանել ժանդու թնդանոթները:

Հեղափոխական կոմիտեյի անդամներից մեկը, սպա-
յական վագոնը մտնելով, արթնացրեց փոխդնդապետին:

— Անմիջապես յետ գնացեք, — ասաց նա, — չենք
թողնի, վոր ձեր գնացքն առաջ ընթանա:

— Ինչպես եք համարձակվում ինձ հրամայել, —
գոռաց փոխդնդապետը: — Յես ցարին չեմ դավաճանում:

— Գիտեք, թե ինչը զորք կա Լուգայում, —
ասաց Հեղկոմի անդամը, — քսան հազար: Մեր մարտ-
կոցն արդեն զրավել ե զիրքերը և պատրաստ ե ռմբա-
կոծել...

— Ա... յեթե այդպես ե, յենթարկվում եմ ուժին, —
ասաց փոխդնդապետը. — Կտրոգաղբեցեք:

Կոմիտեյի անդամները զինվորական վագոնները
մտնելով սկսեցին զինաթափել: Գեորգիյանները մեծ
հաճույքով հանձնում եյին զենքերը:

— Ում ե ցանկալի յուրայիններին կրակել, —
ասում եյին նրանք:

Այդ ժամանակ Կոմիտեյի կարգադրությամբ շոգե-
կառքը գնացքին մոտեցավ: Յերկաթուղայիններն իս-
կույն գնացքից անջատեցին վերջին վագոնը, վորտեղ

գտնվում եյին բոլոր գնդացիրներն ու ձեռքի նոնակաները։ Այդ վագոնը մտավ հեղափոխական ուղեկից պահակ, իսկ շոգեկառքը կամաց-կամաց գնացքը քաշեց դեպի պահեստի գիծը։

— Իսկ ուր ե զորքը, — զարմացած հարցնում եյին գեորգիյան զինվորները, դատարկ պլատֆորմա նայելով, — ուր են ձեր թնդանոթները, Պլատֆորմայի թնդանոթը բանի պետք չե։

— Հետո կիմանաք... — պատասխանում եյին Հեղկոմի անդամները։ — Իսկ այժմ մասք բարով, ձեզ բարի ճանապարհ։

Գնացքը յետ մեկնեց։

ՅԱՐԱԿԱՆ ԳՆԱՅՑՔՈՒՄ

Յերեկոյան ժամը 10-ին մի վագոնից բաղկացած գնացքը մոտեցավ Պակովին, Վագոնից դուրս յեկան Շուլգինն ու Թուչկովը և ուղարկից անցնելով մոտեցան պայծառ լուսավորված ցարական գնացքին։

Բարձրահասակ, դեղնավուն-ալեհել գեներալը նրանց հանդիպելով ասաց։

— Նորին կայսերական մեծությունը հիմա կդա, Նորին կայսերական մեծությունը ուրիշ վագոն ե գնացել։

— Անհարմար ե, վոր պիտօքակ ենք հաղել, ոճիքը ճխտված, — մտածում եր Շուլգինը, — հարկավոր եր ֆրակով ներկայանալ, ածիլված։

Վագոն-հյուրանոցը ծածկված եր կանաչ մետաքսով, ծառը ներս մտավ, բարեկց, ու բոլորը հավաքվեցին փոքրիկ սեղանի շուրջը։

Գուշկովը պատմեց, թե ինչ ե կատարվում Պետրովագում։ Ասաց, վոր անհնար ե հեղափոխությունը ձնչել, հարկավոր ե զահը հանձնել Ալեքսեյին։

Գեներալ Ռուզմակին ասաց։

— Պետրովադից այս կողմն են գալիս զինված ապրանքատար ավտոներ։

— Յես համաձայնվել եմ զահից հրաժարվել, — իսկեց ցարը։ — Այսոր, մինչև ժամի յերեքը մտածում եյի, վոր հոգուտ տղայիս կարող եմ զահից հրաժարվել։ Սակայն հետո վորոշումն փոխեցի։ Հարկավոր ե իմ տեղը յեղբորս նշանակել։

Գուշկովի ու Շուլգինը համաձայնվեցին։ Թեև ըստ որենքի ցարն իրավունք չուներ գահը յեղբորը հանձնել։ Սակայն ինչ նշանակություն ունի որենքը, միայն թե նոր ցարը շուտ գործի անցներ։ Ծարը գնաց մյուս վագոնը։

Այդ ժամանակ պալատականներից մեկը հարցրեց։

— Իսկապէս Պետրովագում այրվել ե տունս Ալս, ախ դժբախտություն, ի-ինչ դժբախտություն...։

Ցարը վերադարձավ. ձեռքին բռնել եր մի քանի կտոր թուղթ, Նրանց վրա գրամեքենայով տպված եր հրաժարականը։

Գուշկովը ու Շուլգինը կարդացին այդ գըությունը։ Ու ցարը ստորագրեց։

— Ալս, ձերդ մեծություն, — ասաց Շուլգինը, — յեթե դուք գոնե մի ամիս առաջ նոր իշխանություն նշանակեյիք, այս բոլորը չեր առաջանա։

— Կարծում եք, — ժպտաց նախկին ցարը։

Շուլգինն ու Գուչկովը, հրաժարականը վերցնելով, իրենց գնացքը վերադարձան։
Ու գնացքը վերադարձավ Պետրոպոլադ։
Կես գիշեր եր։

ՎԱՐԴԱՎԱՅԻ ԿԱՅԱՐԱՆՈՒՄ

Վարշավայի կայարանում խառնաշփոթություն ե, բոլոր շենքերում հավաքված ե հոծ բազմություն. սպասման սրահում կուտակվել ե համարյա մի ամբողջ գունդ զորք։

Շուլգինի մոտ վազեցին յերկաթգծի մի քանի ծառայողներ։

— Մի քանի անգամ ե, ինչ Միլյուկովը ձեզ կանչում և հեռախոսի մոտ։

Իսկ Գուչկովին յերկաթուղայիները տարան իրենց արհեստանոցը՝ միտինդի։

— Զգուշ յեղեք, — բոյլշկի ե ճառողը, — շնչաց մի սպա Գուչկովի ականջին։

— Այո, այդ յես եմ, Միլյուկովը, — հեռախոսափողում գոռում եր Միլյուկովի խոսքու, ընդհատվող ձայնը, — Խորհուրդն իմացել ե ձեր՝ ցարի մոտ լինելու։ Զհրապարակեք մանֆիեստը. ահազին փոխություններ են առաջացել։

— Ինչպես... ճանապարհին արդեն հայտնել եմ բոլորին, և գնդին, և ժողովրդին, և ամեն տեղ, վոր Միլյային ե մեր ցարը, ընկճված պատասխանեց Շուլգինը։

— Հարկավոր շեր այդպես վարվել, — զայրացավ Միլյուկովը։ — Ձեր մեկնելուց հետո ամեն ինչ դեպի վատն ե ընթանում։ Ել վոչինչ չձեռնարկեք։ Կարող ե

մեծ դժբախտության տեղի տալ։ Փնտրեք Գուչկովին և հնարավոր յեղածին չափ շուտ յեկեք Միլիոնի փող, համար 12։

— Ինչու։

— Վորովինետև այնտեղ ե ցարի յեղբայր՝ մեծնիշան Միլյայիլ Ալեքսանդրովիչը, Բոլորս այնտեղ ենք գնում։ Խնդրում եմ աճապարել։

Մեծն իշխան Միլյայիլը իսկապես յեկել եր Պետրովդրադ ու չափազանց զարմացավ, յերբ Պակովից հեռագիր ստացվեց, վոր ինքը փոխարինելու յե ցարին։

ՄԻՏԻՆԳ ՅԵՐԿԱԹԳԾԻ ԱՐՁԵՍՏԱՆՈՅՈՒՄ

Հսկայական արհեստանոցում, ապակյա առաստաղի տակ խմբված եր հազարավոր ամբոխ։ Շուլգինը մոտեցավ Գուչկովին ու փսխաց ականջին։

— Պետք ե այստեղից դուրս պլծնել...

Այդ միջոցին մի բանիոր ճառ եր ասում։

— Ընկերներ, գիտեք թե ովքեր են մտել կառավարության մեջ։ Կարծում եք թե ժողովրդի մարդկէկ են, այն ժողովրդի, վորն ինքն իր համար ազատություն ձեռք բերեց... Միավում եք, ընկերներ. ահա թե ովքեր են նոր մինիստրները։ — Իշխան Լվով, այս, իշխան. մենք մինչև այժմ հենց այդ իշխանների ու զբաժների ձեռքից ելինք տանջվում, և այսոր յերբ ազատ ենք, այժմ նորից մեր գլխին իշխաններ են կարգում։ Իսկ ովքերի մեր գինանաների մինիստրը։ Կարծում եք թե ժողովրդի ցավին տեղյակ մարդ. վոչ, սխալվում եք։ Ֆինանսների մինիստրը կլինի պարոն Տերեշենկոն։ Իսկ ովքեր են նա. նա ինչ կարողություն

ունի. — շաքարի գործարան — տաս համ, հող — հարյուր հազար դեսյատին. իսկ կանխիկ փող — մի յերեսուն միլիոն կհավաքվի...

Բանվորները հուզվում են. բողոքում. իսկ ճառախոսը շարունակում ե.

— Յեվ կամ ուրիշ որինակ. Գուչկովը և Միլյուկովը գնացել են ցարի մոտ. Ում անունից են գնացել. Ժողովրդի: Խորհրդի: Վոչ: Նրանք գնացել են ցարի մոտ Պետական Դումայի անունից: Իսկ ովքեր են նստած Դումայում: — Կալվածատերերը: Յեվ սատանան գիտի, թե նրանք ինչի մասին են խոսել ցարի հետ: Ընկերներ, յես խորհուրդ եմ տալիս այդ Շուլգիններին ու Գուչկովներին այստեղից բաց չթողնել և դռները ամուր փակել:

Դոները փակեցին: Շուլգինը և Գուչկովը անհանգիստ նայեցին իրար: Տեսնում են, վոր ել անհնարին և հիշել նոր ցարի մասին:

Բայց այդ ժամանակ դուրս յեկալ մի ինժեներ և ասաց.

— Ընկերներ, Շուլգինը և Գուչկովը գնացել են ցարի մոտ, վոր համոզեն գահից հրաժարվելու: Նրանք չեն վախեցել գնալու, թեպետ կարող եյին նրանց գնդակահարել: Իսկ դուք, շնորհակալության փոխարեն, դուք նրանց չեք ուզում այստեղից բաց թողնել:

Ինժեները բանվորներին համոզեց: Գուչկովին և Շուլգինին բաց թողեցին:

Յերբ նրանք արհեստանոցից դուրս յեկան, նրանց մոտեցան մի քանի սպաներ:

— Ե՞ս, վատք ասոծու, հաջող վերջացավ, — շնորհացին նրանք, — իսկ մենք համենայն դեպս պատրաստվել եյինք...

Յեվ նրանք ցույց տվին այն գնդացիրը, վոր դրված եր մոտիկ տեղում, բերանը ուղղած դեպի արհեստանոցը...

ՄԻԼԻՈՆՆԻ ՓՈՂՈՑ № 12 ՏԱԽ

Սուրում եր ավտոն, ասես վախչում եր հետապնդումից: Փողոցները լի եյին բանվորներով ու խումբներումք զինվորներով — առանց սպաների: Գնում եյին փողոցի մեջտեղով: Կանգնել եյին տրամվայները: Կառքեր չկային: Յերբեմն անցնում եյին գնդացիրներով բեռով բեռնված ավտոները:

Ավտոն կանգ առավ: Գուչկովը ու Շուլգինը հեարավոր յեղածին չափ արագ վաղեցին դեպի սյունավոր տան մուտքը: Խուսափում եյին փողոցներում թափառող զինվորներին հանդիպելուց:

Մեծ սենյակում ոթոցների ու բազկաթոռների վրա նստել եյին կառավարության բոլոր անդամները, մողղակոն, ու Պետական Դումայից մի քանի հոգի: Մեջտեղում բազմել եր մի բարձրահաստկ նիհար ովիցներ, նեղ ու յերկարավուն դեմքով:

Նոր ցարն եր դա, Միխայիլը:

Միկնույն խնդրի մասին հերթով խոսում եյին նոր մինխստրները: Ասում եյին, վոր Միխայիլը պիտի հրաժարվի գահից, քանի վոր Խորհուրդը համաձայն չե: Այլապես բանվորներն ու զինվորները կտապահեն ցարին, ու նրա հետ նաև նոր կառավարությունը և Դուռը:

ման։ Ու այն ժամանակ Խորհուրդը կանցնի իշխանության գլուխը։

Միլյուկովը նստել եր աչքերը խուփ։ հինգ անքուն գիշերներից թուլացել եր դեմքու հանկարծ նասթափեց։

— Յեթե չընդունեք զահը, ձերդ մեծություն, կտապալվի յերկիրը։ — ասաց Միլյուկովը կտրված ձայնով։ — Առանց ցարի չի դիմանա մեր պետությունը, կտիրի սարսափ, անկարգություն, խառնաշիռթություն, արյունհեղություն։ Չպետք ե զահից հրաժարվել։

— Թույլ տվեք մի քանի ըովե մտածել։ — ասաց Միլյուկովը։

Ու Ռողջանկոյի հետ զուրս յեկավ մյուս սենյակը։ Կերենևէին մի տեղից մյուսն անցնելով շնչում եր.

— Սմեն ըովե զինվորները կարող են ներս խուժել ու ջարդել մեզ։ Հարկավոր ե շուտ վերջացնել։ Հարեան սենյակում Միլյուկովից վոխեց վորոշումը։

— Դուք հավատացած եք, վոր Պետրովը աղում չկա գոնե մի գունդ, վոր ինձ պաշտպանի։ — հաբցրեց Միլյուկովը։


— Այո, — պատասխանեց Ռողջանկոն, — բոլորը Խորհրդի կողմն են։

— Այն ժամանակ գուցե հնարավոր կինի զահն ընդունելուց հետո հեռանալ Պետրովը աղից։

— Խորհուրդը չի թողնի ձեզ քաղաքեց հեռանալ վոչ ավտոյով, վոչ գնացքով։

— Կյերաշխավորե՞ք կյանքիս համար, յեթե ցարդառնամ։

— Կարող են ձեզ հենց այսոր սպանել։



Թույլովիկը հեղափոխականներով։

«Խորհուրդ, ամեն տեղ Խորհուրդ...» մասածեց
Միխայիլը ու բարձր ասաց:

— Վորոշեցի:

Նա վերադարձավ ժողովականների մոտ ու կանգ-
նեց մեջտեղ: Ամենքը հավաքվեցին նրա շուրջը:

Տիրեց լուսիթյուն:

— Ներկա պայմաններում յետ չեմ կարող գահն-
շնդունել, վորովհետե... — Միխայիլը չկարողացավ շա-
րունակել, Շրթունքները դողդողացին: Լաց յեղավ...

Մեկն իսկույն ջուր հասցրեց:

Կերենսկին վազեց միջանցքը, հագնվելու:

Մի քանի հոգի անցան հարևան սենյակը — ման-
կական սենյակը: Միխայիլը, աթոռակի վրա նստած,
վերցրեց արջ խաղալիքը ու սկսեց արորել:

Նրա փոխարեն պատգամավորները դրեցին «Մի-
խայիլի հրաժարականը»:

Կեսոր եր:

ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԴԵՌ ՆՈՐ Ե ՍԿՍՎԵԼ

Մի ամիս եր անցնլ Միխայիլի հրաժարական տալու-
որից: Ռուսաստանին իշխում եր ժամանակավոր կա-
ռավարությունը: Խորհուրդը ոգնում եր նրան: Իսկ
պատերազմը դեռ շարունակվում եր. սովոր գնալով
ուժեղանում:

Ապրիլի յերեքի յերեկոյան նեայում լողում եր
կատերը. մեջը լի նախաստիներ: Կատերը կանգնեց
Լիտեյնի կամուրջի մոտ: Նավաստիները վազեցին
դեպի ծինվանդական կայարանը, վորտեղ արդեն հա-

վաքվել եյին բանվորներն ու դեռ գալիս եյին նորա-
նոր շարքերը դրոշակներով:

Արդեն բոլորովին մութն եր, յերբ հեռվում ուել-
սերի վրա վասկեցին յերեք լույսեր — շոգեկառքի
լապտերները:

Նավաստիները շարքի կանգնեցին պլատֆորմայի
յերկու կողմում: Գնացքը կայարան մտավ: Բոլորը նետ-
վեցին գեպի հինգերորդ վազոնը, վորտեղից ցած իջան
բոյլշերիյան առաջնորդները, վորոնք վերադառնում
եյին Շվեյցարիայից:

Նվազախումբը հանկարծ նվազեց և նավաստիները
պատվի կանգնեցին: Ճանապարհորդները վառ արեկց
աչքերը կկոցելով անցնում եյին սրահից-սրահ: Ու դուրս
յեկան կայարանի հրապարակը:

Հրապարակում շարվել եյին զրահամեքենաներ,
վլորոնք աղոտ գծադրվում եյին ստվար ամբոխի մի-
ջից: Յերբ զրահամեքենաների լուսարձակներից ընկած
ճառագայթները սփովեցին ամբոխի վրա, յերեաց ինչ-
պես ձեռքերը շարժելով, հոսում եր մարդկային հեղեղը:

Լենինը զրահամեքենայի աշտարակին հենվելով,
բաձրացրեց ձեռքը և ասաց.

— Նավաստիներ, ընկերներ, վողջունում եմ ձեզ.
Կարայց չգետեմ, դեռ հավատնում եք ժամանակավոր կա-
ռավարության խոստումներին: Սակայն յես հաստատ-
ուակարության խոստումներին են ասում ձեզ, և
համոզված եմ, յերբ քաղցր ճառեր են ասում ձեզ, և
յերբ խոստանում են ամեն ինչ, — գիտեցեք վոր իս-
րում են ձեզ, ինչպես նաև ամբողջ ուսւ ժողովրդին:

հողը գտնվում ե կալվածատերերի ձեռքին։ Նավաս-
տիներ, ընկերներ, հարկավոր ե մինչև վերջ պայքա-
րել, մինչև պրոլետարիատի վերջնական հաղթանակը։
Կեցցե սոցիալիստական հեղափոխությունն ամբողջ
աշխարհում։

Զրահամեքենան շշաց ու շարժվեց ուռուաների տակ
դեպի Կղեսինսկու պալատը, վորտեղ տեղավորված եր
Կուսակցական Կոմիտեն։ Այնտեղ Լենինը ընկերների
հետ ծրագրելու յեր, թե ինչպես պետք ե կռվել Ժա-
մանակավոր կառավարության և բուրժուազիայի դեմ։
Հեղափոխությունը դեռ նոր երակավում։



Սառն. главната № В-211 Зак. № 1639 Тираж 6.000
Книжная ф-ка Центриздана Народов СССР. Москва,
Шлюзовая набережная, 10.

«Ազգային գրադարան»



NL0312943

50 ԿՈՊ.

Цена 50 коп.

x 4.

13.346



А. САВЕЛЬЕВ

Комната № 13

На армянском языке

ЦЕНТРАЛЬНОЕ ИЗДАТЕЛЬСТВО НАРОДОВ СССР.
Москва, центр, Никольская, 10.